

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԶՈՐ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Կրթական համակարգի շարունակական կատարելագործումը եղել և մնում է նորանկախ Հայաստանի Հանրապետության քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Սա մի գործընթաց է, որի արդյունքում հաղթահարվում են մեր երկրի կրթական համակարգը եվրոպական կրթական տարածքին ինտեգրելու ճանապարհին առկա խոչընդոտները: Այս ընթացքում արմատական տեղաշարժերի է ենթարկվել նաև բուհական համակարգը, որտեղ կատարվող փոփոխությունները տեսանելի են:

Բարեփոխումների ընթացքը բարձրագույն կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է, որը ենթադրում է կրթական ծառայություններ մատուցողի, շահառուների և գործատուների փոխշահավետ համագործակցություն: Ցավոք, մեր երկրում եռակողմ այդ համագործակցությունն առայսօր գրեթե բոլոր ոլորտներում լավագույն դեպքում թույլ, դիպվածային դրսևորում ունի:

Բարեփոխումների գործընթացի ժամանակակից փուլում առաջնահերթ անհրաժեշտություն է առաջացել ուսանողի՝ որպես պատվիրատուի, դերակատարության կարևորումը, ինչը, անշուշտ, առիթ կհանդիսանա տեղին և հիմնավորված շտկումներ անելու կրթական ծրագրերի բովանդակության պլանում՝ կրթության «դասախոսակենտրոն» մոդելից «ուսանողակենտրոն» մոդելին անցում կատարելու նպատակով:

Բուհական կրթական համակարգի կայացման և զարգացման ճանապարհին կրթական գործընթացի մեջ շահակիրների համակողմանիորեն ներգրավվածության ապահովումը և նրանց պահանջների իսպառ բավարարումը այսօր առաջին հերթին ենթադրում է արմատական բարեփոխումներ նշված համակարգում՝ ներառյալ նաև

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

այդ համակարգում աշխատողների բարոյահոգեբանական փոփոխությունները: Բարեփոխումները պետք է կատարվեն եվրոպական կրթական չափանիշներին համապատասխան, քանի որ միայն այս ճանապարհով կարելի է հնարավորինս արագ և առանց ապարդյուն ջանքերի ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին (տարածքին): Այս պարագայում շատ կարևոր են ոչ միայն ԵԲԿՏ-ին անդամագրված և առաջատար դիրքեր գրավող երկրների արդյունավետ փորձի ուսումնասիրությունը, այլև ներդրումը: Կարևոր է նաև ձեռքբերումների վերաբերումը, որի արդյունքում առաջիկայում կարելի է կազմակերպել եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանող և ազգային հոգեկերտվածքն արտացոլող կրթական գործընթաց, որտեղ առանձին շեշտադրումներ կկրեն բուհի միջազգայնացմանը, ելքի արդյունքներին, շրջանավարտների կոմպետենտությանը, առհասարակ կրթության որակին վերաբերող բազմաթիվ այլ հարցեր:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՎԱՌԱՎԱՐՈՒՄ

2015 թվականից սկսած համալսարանի կառավարումը իրականացվում է 2014-2018թթ ռազմավարական պլանի դրույթներին, խնդիրներին և նպատակներին համապատասխան:

Ռազմավարական պլանին զուգահեռ յուրաքանչյուր տարի կազմվում են տարբեր օղակների օպերացիոն պլաններ: (մոտեցումները տարբեր են. կան պլաններ և՛ օրացուցային տարվա, և՛ ուսումնական տարվա ընդգրկմամբ), որոնք էլ դառնում են միջնաժամկետ կամ կարճաժամկետ պլանների հենքը:

2015թ. հավատարմագրման գործընթացը ցույց տվեց, որ Համալսարանը (ՎՊՀ-ն, այսուհետ՝ Համալսարան) կառավարման, ինչպես նաև ենթակառուցվածքների և ռեսուրսների կտրվածքով լուրջ անելիքներ ունի: Ուստի վերջին երեք տարիների ընթացքում, ելնելով գերակա խնդիրներից, բարելավման պահանջներից, շեշտադրել ենք կառավարման գործընթացի փոփոխությունները:

Ռեկտորի՝ 2018թ. թիվ 330 Լ/Կ(17.05.2018թ.) հրամանով վավերացվել է հոգաբարձուների խորհրդի թիվ 26 Լ (10.05.2018թ.) որոշումը, որով կատարվել են կառուցվածքային փոփոխություններ.

1. Կադրերի բաժինը վերաձևակերպվել է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի:

2. Հաշվապահությունը վերաձևակերպվել է ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի:

Սակայն պետք է նշել, որ ռազմավարական այս քայլը առայժմ չնչին առաջընթաց է գրանցել. պատճառը ունեցած կադրերի (նույն մարդկային ռեսուրսների) խնդիրն է. «Ռեսուրսների կառավարում» կարճաժամկետ դասընթացի

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

մասնակցելը չի լուծել այն: Որակի ապահովման բաժնի կողմից դեռևս 2015 թ. կատարվել էր «Մարդկային ռեսուրսների կառավարման աուդիտ» հետազոտությունը, քննարկվել և եզրակացություն-հիմնավորումները ներկայացվել էին բաժնիներին: Սակայն իջեցված հանձնարարականից բխող նոր ռազմավարության և քաղաքականության մշակումը դեռևս գործընթացի մեջ է:

Նույն խնդիրը կա երկրորդ դեպքում. պետք է հստակ տարբերվի ֆինանսների կառավարումը, ռիսկերի վերլուծությունը և հաշվապահական գործառույթների իրականացումը:

Մարդկային ռեսուրսների բաժնի կողմից 2017թ. ապրիլ-մայիս ամսին մշակվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան հիմնադրամի ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորման, վերապատրաստման» կանոնակարգը, որը ուսումնասիրվել և տրվել է տարբեր օղակների նրանց կարծի ստացման նպատակով: Մարտ ամսին այն կներկայացվի գիտխորհուրդ: Կարգով կադրերի վերապատրաստման, ատեստացիայի կազմակերպման պատասխանատվությունը դրվում է բաժնի վրա: Վերջին տարիներին ուսումնաօժանդակ անձնակազմի ատեստավորում չի կատարվել: Կարգի ընդունմամբ 2019 թ. հարցը կկարգավորվի: Սա չի նշանակում, որ խնդիրը ուշադրությունից դուրս է եղել. ուսումնաօժանդակ անձնակազմը իր կրթությամբ և որակավորմամբ հիմնականում համապատասխանում է տվյալ օղակի մասնագետներին ներկայացվող պահանջներին. առ 01.03.2019թ. ունենք 1 դեպք, երբ լաբորանտի կրթությունը պահանջվող կամ հարակից մասնագիտության պրոֆիլին չի համապատասխանում, սակայն պետք է ընդգծել, որ գործ ունենք նույն հաստիքը շուրջ 16 տարի զբաղեցնելու դեպքի հետ:

Ուսումնաօժանդակ անձնակազմի վերապատրաստման գործընթացը նախկինում ենթադրում էր վարձավճարի գանձում, նորի մեջ որակավորման բարձրացման խնդրի ֆինանսական կողմը դրվում է համալսարանի վրա. ուսումը

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

կկազմակերպվի անհատույց: Եթե աշխատակցի կողմից ատեստավորման գործընթացը չհաղթահարվի, ապա, գործող կարգերի սահմաններում, կարող է կկազմակերպվել ևս մեկ դասընթաց, որի համար արդեն աշխատակիցը կվճարի:

2018 թ. ռեկտորի թիվ 160 Լ/կ (13.03.2018թ.) հրամանով հաստատվել է հաստիքացուցակում ներառված 147 պաշտոնի անձնագիր. վերջիններս մշակվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 873-Ն հրամանով հաստատված «Զբաղմունքների դասակարգիչ» հիման վրա և հիմք են ունեցած և նոր հաստիքների տեղակալման համար:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի՝ 2017թ. հայտարարված մրցույթի նախապատրաստման ընթացքում մեծացել է ՄՌԿ-ի բաժնի պատասխանատվությունը:

Պետք է ընդգծեն, որ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքների առաջացման գործընթացը ավանդաբար ղեկավարվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, որը, ելնելով տվյալ ուսումնական տարվա ժամաքանակից և «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների» կարգից, ներկայացնում է հնարավոր թվով հաստիքների առկայությունը՝ ըստ տարակարգերի:

Բաժնի աշխատանքների դրվածքի էական վերափոխման դեպքում խնդիրը կարող է տեղափոխվել ՄՌԿ:

ՄՌԿ բաժինը թափուր հաստիքների հայտարարման կամ առաջաջման, առանց մրցույթի նոր պայմանագրի կնքման խնդիրը կարգավորում է ամբիոնների հետ: Կան համապատասխան կարգեր, սակայն սրանք ևս որոշակի փոփոխման խնդիր ունեն: Առաջիկա ամսին՝ մինչ նոր հայտարարություն տալը, քննարկման կդրվի գործող կարգերում փոփոխություններ կատարելու խնդիրը: 2018թ.-ին քննարկման

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

դրվեցին դեկանի ընտրության կարգը և ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը, որոնք արդեն ընդունված են:

2018 թ. հայտարարվել է պրոֆեսորադասախոսական կազմի կողմից պաշտոնակալված 62.75 հաստիքի մրցույթ, կայացվել է 41 հաստիք մրցույթ, չեղարկվել է 21.75-ը, հայտարարվել է նաև 3 ամբիոնի վարիչի մրցույթ, որը կասեցվել է պր. Վ. Եղիազարյանի և 4 այլ պրոֆեսորների կողմից բարձրացված խնդրի հիմքով. թափուր տեղի այլ մրցույթներ ևս հայտարարվել և կազմակերպվել են:

2018թ. դադարեցվել և նոր պայմանագրեր չեն կնքվել արհեստանոցի (մետաղամշակման) վարիչի, գիտաշխատախմբի ղեկավարի հետ: Առաջին աշխատատեղը չի կարող համալրվել և կառուցվածքային փոփոխություն է առաջարկվում, քանի որ «Տեխնոլոգիա և ձեռնարկչատիրություն» ՄԿԾ-ն այս պահին ներդրված չէ, իսկ արհեստանոցը ուսումնական է:

ՄՌԿ-ն իր գործառույթների շրջանակներում մասնակցել է ԳԱՑ-ի կազման աշխատանքներին (քանակական տվյալների կտրվածքով):

Բուհերի կառավարման արդյունավետության համար ընդունված է դասավանդող / չդասավանդող հարաբերակցությունը (ըստ հաստիքների թվի). մեզ մոտ այն բարելավվել է՝ հասնելով 1.3-ի: Սրան զուգահեռ հետընթաց է ունենում ուսանող/աշխատող հարաբերակցությունը, ինչը վտանգավոր է. պատճառը թերլրված կուրսերի առկայությունն է:

2018թ. ավարտին է հասցվել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդնումը: Սակայն պետք է ընդգծել, որ ծրագրի մշակողների կողմից (ծրագիրը մշակվում էր «Գովեռն» (Govern) դրամաշնորհի շրջանակներում, և Համալսարանը ուներ համամասնական ֆինանսական ներդրում), այն ամբողջությամբ չի տրամադրվել, քանի որ, համալսարանի կողմից մշակված և տարիներ շարունակ օգտագործված մոտեցումները առաջացրել են ծրագրային խնդիրներ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Որակի կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ ևս կատարվել են քայլեր:

Ռազմավարական ծրագրի իրականացման ցուցիչների հիման վրա մշակվել է ռազմավարական պլանի իրականացման հաշվետվողականության սխեմա, ինչը հնարավորություն է տալիս աշխատանքները համապարփակ ձևով ամփոփել ըստ կատարողականի արդյունքների: Որակի ապահովման կենտրոնի աշխատանքների համակարգման, բարելավման ծրագրի կատարողականի գնահատման մեխանիզմների կատարելագործման նպատակով փորձարկվում է CALS համակարգը:

Առաքելության և նպատակների վերանայման համար իրականացվել է SWOT վերլուծություն՝ ռազմավարական ծրագրի բոլոր ուղղություններով:

Որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավվածությունը մեծացնելու և ակտիվացնելու նպատակով կազմակերպված հանդիպումների և քննարկումների ընթացքում բարձրացված մի շարք հարցերի հիման վրա ուսանողների համար կազմվել է ձեռնարկ:

Տեղեկատվության հավաքագրման գործող մոդելի ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարելագործվել են որակի կառավարման հետադարձ կապի մեխանիզմները: Փորձարկվում է ստորաբաժանումների հաշվետվողականության սխեմա, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշխատանքի արդյունքները անմիջապես տեղադրել ներքին ցանցում և հասանելի դարձնել բոլոր ստորաբաժանումների համար:

2018թ. համալսարանի կառուցվածքի մեջ կատարվել է փոփոխություն, որի արդյունքում ձևավորվել են ՄՌԿ և ՖՌԿ բաժինները, սակայն դեռևս անելիքներ կան բովանդակային փոփոխության առումով:

Լուրջ բարեփոխման խնդիր ունեն ֆինանսական ռեսուրսների բաժնի աշխատանքները, մինչ այժմ դրանք մնում են հին անվանման դրոշմի ծիրում: Բաժնի քաղաքականության նախնական տարբերակ ևս ներկայացվել է, սակայն այն դեռևս շատ հում է: Թերևս ճիշտ կլինի քաղաքականության և ռազմավարության մշակման

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

համար պատվերի իջեցումը. պետք է կատարենք ֆինանսական ներդրում՝ համոզված լինելով, որ կլուծենք նաև ռիսկերի կառավարման խնդիրը: Այստեղ ունենք նաև կադրերի պաշտոնի անձնագրերից բխող որակավորումների անհամապատասխանության խնդիր. ՖՌԿ բաժինը այսօր չի կարող վերլուծաբան չունենալ: Խնդրի կարգավորումը ավելի քան հրատապ է:

Նույն խնդիրը կա երկրորդ դեպքում. պետք է հստակ տարբերվեն ֆինանսների կառավարումը, ռիսկերի վերլուծությունը և հաշվապահական գործառույթների իրականացումը:

Կառավարման իրավական դաշտի փոփոխություններ

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության բարեփոխումների արդյունքում իրավական դաշտում պարբերական բարելավումներն ու օրենսդրական փոփոխությունները տրամաբանորեն հանգեցրել են բուհի կանոնադրության և գործող կարգերի վերանայման և ներպետական օրենսդրությանը համապատասխանեցնելու անհրաժեշտությանը: Փոփոխվել են բուհում գործող որոշ կանոնադրություններ ու կանոնակարգեր: Դրանք համապատասխանեցվել են ՀՀ ներպետական օրենսդրությանն ու այլ ենթաօրենսդրական ակտերին: Վերջին փոփոխությունները, որոնք նախաձեռնվել են գործող կարգերում, վերաբերել են դեկանների ընտրության և դասախոսների՝ մրցութային հիմունքներով ընտրության կազմակերպմանը, ինչի վերաբերյալ համապատասխան առաջարկներն ու փոփոխված նախագծերը հանձնվել են բուհի ռեկտորին: Հաստատված վերջին կարգերից պետք է հիշատակել մենթորության կարգը և Համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգերը, ինչպես նաև առաջիկայում Համալսարանի ուսումնաօժանդակ անձնակազմի՝ գիտխորհրդի հաստատմանն առաջարկվող ատեստավորման կարգը:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Որոշակի աշխատանք է իրականացվել ներքին իրավական դաշտի կանոնակարգման ուղղությամբ, մասնավորապես՝ գործատուի անհատական իրավական ակտերը ներպետական օրենսդրությանը համապատասխանեցնելու, ներպետական օրենսդրության և լոկալ ակտերի բախումները կանխելու և հնարավորինս բացառելու ուղղություններով:

Համալսարանում սահմանվել են փաստաթղթաշրջանառության, իրավական ակտերի ձևակերպումների, ներքին և անհատական իրավական ակտերի մատյանների վարման կարգերը, դիմումների քննարկման ժամկետները, փաստաթղթերի արխիվացման կարգը, ինչպես նաև բոլոր մյուս ստորաբաժանումների գործավարության կարգերը: Ավելին, կիրարկվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ժամանակակից մոդելը, որով ապահովվում է փաստաթղթերի բնականոն շրջանառությունը բոլոր ստորաբաժանումների միջև:

Գործավարության զարգացման ռազմավարական խնդիրները լիովին իրագործվել են և շարունակում են կյանքի կոչվել: Մասնավորապես, հրամանների նախագծերի կազմումը, դիմում-բողոքներին, զեկուցագրերին, գրություններին սահմանված ժամկետներում պատասխաններ ուղարկելը, ելից և մտից փաստաթղթերին պատասխանների պատշաճ ձևակերպումը և փաստաթղթերի արխիվացումը կազմում են բուհի բնականոն գործունեության բաղադրիչները:

Համալսարանի իրավաբանական բաժինն իր իրավասության շրջանակում ապահովել և ապահովում է Համալսարանի շահերի ներկայացումը ինչպես դատարանում, այնպես էլ այլ պետական և տեղական մարմիններում: Ուստի իրավաբանորեն գրազետ պայմանագրային հարաբերությունների հաստատումը և համագործակցային մթնոլորտի ձևավորումը հիշյալ մարմինների միջև բխում է երկուստեք շահից:

2018թ. հաստատվել են հետևյալ կարգերը.

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

1.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին արտասահմանյան գիտական գործուղումներ տրամադրելու կարգ»	Հրաման թիվ 122 Լ/Կ	26.02.2018թ.
2.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»	Հրաման թիվ 123 Լ/Կ	26.02.2018թ.
3.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգում լրացում կատարելու մասին»	Հրաման թիվ 211 Լ/Կ	3.04.2018թ.
4.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգում փոփոխություն կատարելու մասին»	Հրաման թիվ 212 Լ/Կ	3.04.2018թ.
5.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման (2018-2019 ուսումնական տարի) կանոնակարգ»	Հրաման թիվ 291 Լ/Կ	2.05.2018թ.
6.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի կրթական ծրագրերում ընդգրկված կամ ընտրական դասընթացների ընտրության կարգը»	Հրաման թիվ 292 Լ/Կ	2.05.2018թ.
7.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը»	Հրաման թիվ 293 Լ/Կ	2.05.2018թ.
8.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի աշխատողներին գիտակազմակերպական,	Հրաման թիվ 304 Լ/Կ	4.05.2018թ.

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

	ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման ու վճարման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»		
9.	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում առանց մրցութային ընտրության նոր աշխատանքային պայմանագիր կնքելու» կարգում փոփոխություններ և լրացում կատարելու մասին	Հրաման թիվ 305 Լ/Կ	4.05.2018թ.
10.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգում փոփոխություններ կատարելու և հաստատելու մասին»	Հրաման թիվ 433 Լ/Կ	20.06.2018թ.
11.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգ»	Հրաման թիվ 629 Լ/Կ	2.07.2018թ.
12.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Երիտասարդ դասախոսների (աշխատակիցների) մենթորության կազմակերպման կարգ»	Հրաման թիվ 1078 Լ/Կ	9.11.2018թ.
13.	«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»	Հրաման թիվ 1079 Լ/Կ	9.11.2018թ.
14.	«Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգ»	Հրաման թիվ 1187 Լ/Կ	25.12.2018թ.
15.	«Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն»	Հրաման թիվ 1188 Լ/Կ	25.12.2018թ.

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Կրթական գործունեությունը և վերջինիս կառավարումն ուղղորդված են եղել ռազմավարական նպատակների իրականացմանը՝ աշխատաշուկայի պահանջները բավարարող մասնագետների պատրաստում, տարածաշրջանի կարիքների բավարարում:

Մասնագիտական կրթական ծրագրեր

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման, նորերի ներդրման խնդիրը առավել քան կարևոր է, որովհետև ուսումնասիրությունները, միջավայրի արձագանքները փաստում են, որ անելիքները բավականին շատ են հատկապես շրջանավարտների հմտությունների և կարողությունների բարելավման կտրվածքով: Այդ նպատակով 2017թ. դեկտեմբերին Համալսարանի գիտական խորհրդում վերահաստատվել են ներդրված ՄԿԾ-ների ուսումնական պլանները, որոնց մեջ կատարվել է դասընթացներին հատկացված ժամաքանակի փոփոխություն: Ունեցել ենք երկու կարևոր խնդիր.

1. ուսանողների լսարանային բեռնվածքի թեթևացում,

2. դասընթացներին հատկացված ժամաքանակների՝ դասախոսություն /գործնական /սեմինար/ լաբորատոր հարաբերակցության փոփոխություն:

Արդյունքում բակալավրիատի ուսանողի շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը իջեցվել է 24-25 ժամի (28-30 ժամի փոխարեն), մագիստրատուրայի ուսանողի համար՝ 18-20 ժամ (22-24 ժամի փոխարեն):

Փոփոխություն է կատարվել «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

կազմակերպման» օրինակելի կարգի դրույթներում: 2018թ. կատարված փոփոխությունը արդեն գործել է ն' բակալավրիատում, ն' մագիստրատուրայում:

Դեռևս 2017թ. սկսվել է հանրային պատվերի և աշխատանքային շուկայի ուսումնասիրությունը, որը եղել է մշտական:

Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվել ինչպես որակի ապահովման կենտրոնի, այնպես էլ կարիերայի կենտրոնի կողմից:

2018 թվականին նոր կրթական ծրագրեր չեն ներդրվել. բակալավրիատում ներդրված է 26, իսկ մագիստրատուրայում՝ 12 ՄԿԾ:

Բակալավրի կրթական ծրագիր (առկա և հեռակա ուսուցում)

Դասիչ	Մասնագիտություն	Ուսուցման համակարգ	
		Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	✓	✓
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	✓	✓
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	✓	✓
032101.01.6	Լրագրություն	✓	
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	✓	✓
031301.01.6	Հոգեբանություն	✓	✓
051000	Մանկավարժություն և հոգեբանություն		✓
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն	✓	✓
011401.11.6	Կերպարվեստ	✓	
011401.13.6	Երաժշտական կրթություն	✓	
011401.18.6	Պատմություն	✓	✓
042101.01.6	Իրավագիտություն	✓	✓
011401.03.6	Աշխարհագրություն		✓
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)	✓	✓
101801.01.6	Սերվիս	✓	
092301.01.6	Սոցիալական աշխատանք	✓	
011401.01.6	Կենսաբանություն	✓	✓
053101.02.6	Դեղագործական քիմիա	✓	✓

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

011401.02.6	Քիմիա		V
011401.09.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	V	V
011401.05.6	Մաթեմատիկա	V	V
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	V	V
011401.06.6	Ինֆորմատիկա		V
056802.01.06	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	V	
055102.01.6	Ռադիոֆիզիկա	V	
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	V	

Մագիստրոսի կրթական ծրագիր

Դասիչ	Մասնագիտություն
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
011102.05.7	Կրթության կառավարում
031301.01.7	Հոգեբանություն
011401.18.7	Պատմություն
041301.17.7	Հանրային կառավարում
011401.05.7	Մաթեմատիկա
011401.06.7	Ինֆորմատիկա
011401.04.7	Ֆիզիկա
011401.01.7	Կենսաբանություն
053101.02.7	Դեղագործական քիմիա

Ելնելով տեղական աշխատաշուկայի ուսումնասիրությունից և ուսանողների կարծիքից՝ 2018թ. մագիստրատուրայի ընդունելությունը 7 մասնագիտությունների գծով հայտարարվել է մանկավարժության մագիստրոսի ԿԾ-ով:

2018թ. բակալավրիատի շրջանավարտները ստացել են համալսարանական տարբեր մասնագիտությունների բակալավրի որակավորում (բանասիրության, կենսաբանության, մաթեմատիկայի բակալավր և այլն). աշխատաշուկայում ավելի մեծ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

հնարավորություն ունենալու խնդիրն է տարել նշված քայլին: Նույն կերպ, ելնելով ուսանողների հետ տարված աշխատանքներից, հայտարարվել է նաև 2019թ. ընդունելության մրցույթը:

2018թ. սեպտեմբերին հանձնարարական է իջեցվել ուսումնամեթոդական փաստաթղթերի բարելավման համար:

ՄԿԾ-ների վերանայումը ինքնանպատակ չի եղել. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հանձնարարական է իջեցվել համաձայն որի՝ ելնելով վերջնարդյունքների գերակայությունից՝ փոփոխություններ են կատարվել ՄԿԾ-ների բոլոր բաղադրիչների մեջ: Մասնավորապես ամբիոնների վարիչներից պահանջվել է բոլոր ԱՈՒՄՓ-ների վերանայում, կարգաբերում և թերությունների վերացում:

Գործող ուսումնական պլաններով դասավանդումը իրականացվում է տեսական 828 դասընթացներով (բացառապես գործնական և պրակտիկ դասընթացները չեն ընդգրկված): Վերջիններս անընդհատ վերանայվել են. ԱՈՒՄՓ-ի ստեղծման և վերանայման համար ժամաքանակ է հատկացվում (Տե՛ս «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հիմնադրամի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կարգը»):

Հայտնի է, որ բարելավումն անընդհատ գործընթաց է, ինչը նշանակում է, որ մենք դեռևս ունենք իրավիճակ, որտեղ կան թերություններ.

2018-19 ուստարվա համար ուսանողներին տրամադրված ուսումնամեթոդական նյութերի (կրիչների) թերություններ.

Գրականության ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
1.	Կ/դ/Արևելքի գրականություն	Հայոց լեզու և գրականություն	առկա	4	2	փաթեթ
2.	Ռուսական	Ռուսաց լեզու և	առկա	2	1	փաթեթ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

	բիլինանե-րը և համաշխարհային էպոսը	գրականություն /մագ./				
3.	19-րդ դարի ռուսական դասական ռեալիզմը /մոռացված անուններ/	Ռուսաց լեզու և գրականություն /մագ./	անկա	1	2	փաթեթ

Օտար լեզվի ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
1.	Եվրոպագիտություն	Օտար լեզու և գրականություն /մագ./	անկա	1	1	փաթեթ

Արվեստի ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
1.	Քանդակ	Կերպարպեստ	անկա	1	2	փաթեթ
2.	Կ/դ Համաշխարհային մշակույթի պատմություն	Երաժշտական կրթություն	անկա	3	1	փաթեթ

Մաթեմատիկայի ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
1	Մաթեմատիկական վիճակագրության որոշ հարցեր	Մաթեմատիկա /մագ./	Առկա	2	1	Փաթեթ, Դասախոսություն

Ֆիզիկայի ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
1.	Իոն-միջուկային փոխազդեցության ֆիզիկա և միջուկի մոդելներ	Ֆիզիկա/մագ./	Առկա	1	2	փաթեթ
2.	Կ/դ Մինքրոտրոնային ճառագայթման տեսություն	Ֆիզիկա/մագ./	Առկա	1	2	փաթեթ

Քիմիայի ամբիոն

N	Առարկա	Մասնագիտություն	Բաժին	Կուրս	Կիսամ.	Թերի նյութեր
		և		ս	.	ը

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

1.	Նանոքիմիա և նանոտեխնոլոգիաներ	Քիմիա	հեռակա	4	1	փաթեթ
2.	Կ/դ Կոլոիդների օպտիկական և կինետիկական հատկությունները	Դեղագործական քիմիա	հեռակա	5	2	փաթեթ
3.	Մասնագիտության արդի հիմնախնդիր.	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	1	փաթեթ
4	Դեղանյութերի հետազոտության ֆիզիկաքիմիական մեթոդներ	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	1	փաթեթ
5	Դեղերի արտադրական տեխնոլոգիա	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	2	փաթեթ
6	Դեղերի կենսատեխնիկական արտադրություն	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	2	փաթեթ
7	Կ/դ Կենսաթաղանթները դեղաբանության մեջ	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	2	փաթեթ
8	Կ/դ Դեղանյութերի թերմոդինամիկական, կինետիկական և ռեակցիոնունակությունը	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	2	փաթեթ
9	Կենսածին տարրերի քիմիա	Դեղագործական քիմիա /մագ./	առկա	1	1	փաթեթ

Հարցն ամբողջությամբ չի կարող լուծված լինել, որովհետև բարելավման նպատակով իրականացվող փոփոխությունները մշտական գործընթաց է: Սակայն քրոնիկ թերացումը ևս անընդունելի է: Պետք է նշել, որ ամբիոնների վարիչների երբեմն անբարեխղճության հասնող աշխատանքը չի ապահովել խնդրի լուծման ամբողջականությունը: Որակի ապահովման բաժնի կողմից կատարված ուսումնասիրությունը (մասնավորապես «Սոցիալական մանկավարժություն» ՄԿԾ-ի գծով), իմ կողմից կողմից կատարված ուսումնասիրությունները («Սերվիս», «Սոցիալական աշխատանք») այդ են փաստում:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Կրթական ծրագրերի իրականացմամբ ենք մենք արտադրանք (շրջանավարտ) տալիս: Քայլեր են կատարվում դասավանդման մեթոդների փոփոխության ուղղությամբ: Մեր ԱՈՒՄՓ-ների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարող ենք ապրել նիրվանայի մեջ. մեթոդները բազմազան են և ժամանակակից, սակայն ուսանողը, դեռևս բարձրաձայնում է հնացած մեթոդի կամ դասախոսության թելադրության խնդիրը:

2018թ. 13 դասախոս շարունակական բաժնի կողմից կազմակերպվող որակավորման դասընթացների ընթացքում ուսումնասիրել է մանկավարժահոգեբանական պատարաստվածության բարելավման դասընթաց: Ուսումնասիրողական վարչության կողմից կազմակերպվել են «Դասավանդման մեթոդներ», «Ուսումնառության մեթոդներ», «Գնահատման մեթոդներ» սեմինարները: Սակայն խնդիրները դեռևս առկա են:

Կրթական բարեփոխումների բաժնի կողմից մշակվել է «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն», վերամշակվել է «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման, ներդրված ծրագրերի վերանայման ռազմավարության իրականացման ընթացակարգ» փաստաթղթերը, որոնք ներկայացվել են գիտխորհրդի քննարկմանը և հաստատվել են:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է բաժնի գործառույթներով պայմանավորված աշխատանք՝ ՎՊՀ-ի կրթական ծրագրերի բարելավմանը, արդիականացմանը նպաստելու ուղղությամբ: Այն ներառում է տեղեկատվության որոնման, վերլուծության և համակարգման համապատասխան գործողություններ:

Բարեփոխվել է մագիստրոսական կրթության ՄԿԾ-ների նաև կրթական և հետազոտական աշխատանքների բաղադրիչների հարաբերակցությունը. հետազոտական բաղադրիչին հատկացված 12 կրեդիտը դարձել է 18: Առաջին անգամ պահանջ է դարձել (6 կրեդիտ) մագիստրոսական թեզի թեմայի շրջանակներում հոդվածի տպագրումը կամ զեկուցումը: Այսպիսով՝ մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչը հասցվել է 48 կրեդիտի (40%): Նմանատիպ

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

քայլ է կատարվել նաև բակալավրի համակարգում ներդրված ԿԾ-ում. այստեղ հետազոտական բաղադրիչը հասցվել է մինչև 15 կրեդիտի:

2018թ. նախապատրաստվել և տպագրվել է «Մագիստրոս» ժողովածուն, որի մեջ ընդգրկված են 39 մագիստրոսների հոդվածները, 76 շրջանավարտներից հանրապետական և միջազգային ամսագրերում տպված հոդվածներ էին տպագրել 37-ը, ուստի լրացուցիչ տպագրության հարց չի եղել: Հետազոտությունները կատարվում են միայն թեզի շրջանակներում:

Բարելավումն առաջարկվել է դեռևս 2016-ին, և այն տարածել ենք 2016-ին ընդունված և 2018-ին ավարտած բոլոր մագիստրոսների վրա:

2018թ. բակալավրիատի (առկա և հեռակա ուսուցման համակարգի) բոլոր շրջանավարտների համար պարտադիր է եղել ավարտական աշխատանք գրելը. ընդհանուր առմամբ պաշտպանության է ներկայացվել բակալավրի 497 աշխատանք և մագիստրոսի 79 թեզ:

Համակարգը	Թույլատրվել է մասնակցելու պետական քննություններին և դիպ. աշխ-ի պաշտպանությանը	Հանձնել են բոլոր պետական քննությունները և պաշտպանել են դիպլոմային աշխատանքները դրական գնահատականներով, առանց նախորդ տարիների շրջանավարտների	Ընդամենը	Դրանցից ստացել են գնահատականներ				Նախորդ տարիների շրջանավարտներից թույլ է տրվել մասնակցել պետական քննություններին կամ դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը	Նախորդ տարիների շրջանավարտներից դրական գնահատական են ստացել	Ավարտել են բուհը և ստացել են դիպլոմ
				«5»	«4»	«3»	«2»			
Առկա	307	307	307	193	95	19	0	2	3	310
Հեռակա	190	190	190	36	92	62	0	26	9	199
Մագիստրատուրա	79	76	76	68	7	1	0	0	0	76
Ընդամենը	576	573	573	297	194	82	0	28	12	585

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Բակալավրի կրթական ծրագրերի մեջ «Ավարտական աշխատանք» բաղադրիչի ներդրումը եղել է պահանջ (Տե՛ս ՀՀ կրթության և գիտության նախարարի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգը (17.11.2017թ.):

Ներդրման փորձը փաստում է, որ մի կողմից կրթության և հետազոտության բաղադրիչների հարաբերակցությունը պիտի ապահովի ապագա մասնագետի հետազոտական, ապա նաև գիտական աշխատանքների կատարման հմտությունների և կարողությունների բարելավումը, բայց մյուս կողմից երևան են գալիս փաստեր, որոնք կապվում են շրջանավարտի՝ նման գործունեություն ծավալելու անպատրաստությանը, թեպետ միշտ ուսումնական պլանների պարտադիր բաղադրիչ է եղել կուրսային աշխատանքը (2-3՝ ըստ գործող պլանների), ուսանողը հաճախ ներգրավված է եղել նաև ՈւԳԸ -ի աշխատանքներին, հանդես եկել զեկուցումներով, տպագրվել, բայց վերոնշյալները դեռևս անբավարար են խնդիրը վերջնականապես լուծելու համար:

Կա նպատակը և խնդիրը. արդյոք սա ճիշտ քայլ է հետազոտական կարողությունների բարելավման համար. պետք է փաստել, որ շատ դեպքերում մեր իրականության մեջ տուրք է տրվում իրեն չարդարացնող միջազգային որոշ գործիքների ներդրմանը, մյուս կողմից ակնկալվում է հնարավոր կոռուպցիայի բացառում:

Հեռակայող ուսանողի համար խնդիրները բազմազան են. հարցը առկա ուսուցման համակարգում շատ ավելի բարվոք վիճակում է:

Փորձը ցույց տվեց նաև դասախոսական ռեսուրսի մեջ ունեցած խնդիրները. հետազոտական աշխատանք կարող է ղեկավարել գիտահետազոտական գործունեությամբ ակտիվորեն զբաղվող անհատը: Առաջին հերթին աշխատանքների

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ղեկավարումը հանձնարարել ենք նման անհատների, սակայն կա սահմանային թվի խնդիր, որքան էլ դասախոսը լինի բարեխիղճ 4-5 աշխատանք դժվար է ղեկավարել: 2018թ. փորձ կատարվեց «Հոգեբանություն» մասնագիտության ավարտական աշխատանքների ղեկավարման համար հրավիրել ոչ վանաձորաբնակ դասախոսների. խորհրդատվությունները պետք է իրականացվեին առցանց, ղեկավարումը՝ նույնպես, սակայն ուսանողները իրենց դժգոհությունը հայտնեցին և հրաժարվեցին նման ձևով ղեկավարվել: Ըստ մեր մշակած «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի»՝ ուսանողն է դիմումով ընտրում ղեկավարին, ուստի հրաժարվեցինք այդ ճանապարհից: Համոզված եմ, որ քայլը ուսանողների կողմից ճիշտ չէր և կարող էր նաև ուղղորդված լինել: Դրվածքի բարելավման ճանապարհներ կան. խնդիրը և՛ ուսանողի, և՛ դասախոսի մեջ ճիշտ վերաբերմունքի ձևավորման հարթությունում է. ոչ թե դիպլոմ, թուղթ, այլ գիտելիք և կարողություն տալու, դասախոսի կողմից էլ ոչ թե տարեկան բեռնվածքի կատարում, այլ դասավանդողի մասնագիտական ունակությունների զարգացում և բարոյական նորմի պահպանում:

2018թ. պաշտպանության ներկայացված բոլոր ավարտական աշխատանքները արժանացել են դրական գնահատականի. չի կայացել 3 աշխատանքի պաշտպանություն. կատարողները չեն կարողացել քննության ներկայանալ երեխայի ծննդյան պատճառով:

Բակալավրիատում ներկայացված աշխատանքների 46% գնահատվել է «գերազանց» (-A, A, +A), իսկ 37%-ը «լավ» (-B, B, +B), «բավարար» (-C, C, +C) գնահատվել է 16%-ը, առկա ուսուցման համակարգում վերջին ցուցանիշը ավելի փոքր է՝ 6%:

Ցուցանիշները շատ ավելի բարձր են մագիստրոսական կրթության համակարգում՝ «գերազանց»՝ 86%, «լավ»՝ 8.8%, «բավարար»՝ 1.2%:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Ընդունելություն

Դիմորդների թվի անկումը վերջին տարիներին ակնառու է և համապետական խնդիր է:

Դիմորդների թվի նվազումը բակալավրիատում պայմանավորված է առաջին հերթին հանրակրթության շրջանավարտների թվի նվազմամբ: Երկրորդ կարևոր գործոնը բարձրագույն կրթության նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունն է հայկական ընտանիքների մի մասում, որոնք անընդհատ կանգնած են ժողովրդագրական տեղաշարժի ընտրության առջև. կրթություն ստանալը հետին պլան է մղվում: Մյուս կարևոր գործոնը աշխատաշուկայում ոչ միայն թափուր տեղերի գրեթե բացակայությունն է, այլ եղածների պաշտոնակալման գործընթացի ժամանակ ոչ մրցակցային պայմանների առկայությունը, ինչպես նաև այլ գործոնների ազդեցությունն է:


Վերջին 4 տարում մեզ մոտ արձանագրվել է հետևյալ իրավիճակը.

	Ուսումնական տարի			
	2014-15	2015-16	2016-17	2017-18
Դիմորդների թիվը (բակալավրիատ, մագիստրատուրա, առկա)	588	458	564	457
Բակալավրիատ (առկա)	424	420	436	366
Բանասիրական ֆակուլտետ	82	90	91	90
Մանկավարժության ֆակուլտետ	119	135	141	88
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ	119	128	111	79
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ	61	44	62	66
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ	43	23	31	43
Մագիստրատուրա	156	28	127	91
Բանասիրական ֆակուլտետ	45	0	43	29
Մանկավարժության ֆակուլտետ	36	19	7	12
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ	45	9	34	21
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ	10	0	28	13
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ	20	0	15	16
Ասպիրանտուրա (հայցորդություն)	0	8	10	0
Լեզվաբանություն	0	4	1	0
Բանասիրական գիտություններ	0	0	1	0

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ	0	1	2	0
Մանկավարժական գիտություններ	0	1	2	0
Կենսաբանական գիտություններ	0	2	2	0
Փիլիսոփայական գիտություններ	0	0	1	0
Տնտեսագիտություն	0	0	1	0



Մագիստրոսական կրթության նկատմամբ հետաքրքրության նվազումը առաջին հերթին պայմանավորված է աշխատաշուկայում մասնագետների տարակարգերի՝ տարբերակված չափորոշիչներով պաշտոնի նկարագրերի բացակայությամբ:

Բակալավրիատում չնչին տատանմամբ ընդունելության տվյալները գրեթե անփոփոփոխ են բանասիրական և կենսաբանաքիմիական ֆակուլտետներում, կենսաբանաքիմիական ֆակուլտետում աճը կատարվել է ի հաշիվ «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բաժնի, որի վճարովի համակարգ դիմողները ընդունելության քննությունների ժամանակ «Մարդակազմություն» առարկայից այլևս քննություն չեն հանձնում:

Մտահոգիչ է մանկավարժության ֆակուլտետի դիմորդների թվի նվազումը, և սա այն դեպքում, երբ վճարովի համակարգ ընդունվելու համար հիմնականում հանձնում են միայն «Հայոց լեզու և գրականություն»: Վերջին երեք տարիների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննությունների թվի նվազեցումը այնքան էլ լավ ճանապարհ չէ. 7.5-9 միավորով ընդունված դիմորդը, ուսումնառության առաջին

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ամսում հեշտ է հեռանում: Սփոփիչը այն է, որ, ըստ գործող կարգի, նման ուսանողները հայտվում են հեռակա ուսուցման ընդունելության ցուցակներում: Փաստերը ցույց են տալիս, որ առկա համակարգ ընդունված և կցագրված 25 դիմորդ, դիմել է հեռակա ուսուցման համակարգ:

Չպետք է մոռանալ, որ 2018թ. ՀՀ-ում արձանագրվել էր դիմորդների շուրջ 20% անկում (դպրոցները սովել են մոտ 14 000 շրջանավարտ):

	Ուսումնական տարի			
	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ընդհանուր դիմորդների թիվը	11222	11325	11375	9073
ՎՊՀ դիմորդների թիվը	424	420	436	366
ՎՊՀ դիմորդների բաժնեմասը ընդհանուր հոսքում	3.8	3.7	3.8	4

Ցավոք, արական սեռի դիմորդների թիվը շարունակում է մնալ մտահոգիչ.

	Ուսումնական տարի			
	2014/15	2015/16	2016/17	2017/18
Բակալավրիատի (առկա) դիմորդների թիվը	424	420	436	366
Բակալավրիատի (առկա) իգական սեռի դիմորդների թիվը	373	349	337	288
Հարաբերությունը (դիմորդներ %)	88	83.1	77.3	78.7
Ընդունվածների թիվը	349	369	381	298
Իգական սեռի ընդունվածների թիվը	307	307	310	240
Հարաբերությունը (ընդունվածներ %)	88	83.2	81.4	80.5

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Անկում է արձանագրվել նաև մագիստրատուրայի ընդունելության ժամանակ՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 23%: Պատճառներից մեկը բակալավրիատի շրջանավարտների թվի նվազումն է, մյուսը՝ աշխատանք+ուսումնառության համատեղման խնդիրը, չնայած որ 2018թ. ընդունվածները, ինչպես փաստել ենք արդեն, ավելի քիչ լսարանային ժամաքանակով են սովորում, բացի այդ նրանց ուսումնական պլաններում 4-րդ կիսամյակում տեսական դասընթացներ չկան (բացառությամբ «Պատմություն» մասնագիտության):

Մանկավարժական մասնագիտությունների համար (գոնե մագիստրոսական կրթության համակարգում) սովորողի անհատական ուսուցման վերականգնումը կշտկի դրությունը. գյուղական դպրոցները արդեն լուրջ խնդիրներ ունեն:

Ընդունելության հետ կապված հարցերի քննությունն անհնար է առանց հանրակրթության կողմից առաջադրվող խնդիրների վերլուծության, այսպես՝ 2018թ. հեռակա ուսուցման համակարգի ընդունելությունը ցույց տվեց, որ դիմորդների 34.8%-ը միայն հաղթահարեց քննությունները. վերջիններս հաղթահարել էին բացառապես պահանջվող մինիմալ գիտելիքի շեմը, այլ գործոններ չեն եղել:

Ունենք հետևյալ իրողությունը.

	Ուսումնական տարի			
	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դիմորդների թիվը	289	274	213	198
Ընդունվածների թիվը	255	238	133	69
Դիմորդների թվի ընդունվածների թվին հարաբերությունը	1.1	1.2	1.6	2.9

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Դիմորդի համար, ինչպես նաև հանրության այլ շերտերի համար համալսարանը պետք է դառնա գրավիչ: Այդ ուղղությամբ բավարար աշխատանք է կատարում «Բուհ-դպրոց» կապերի բաժինը:


Աշակերտության շրջանում տարվող մասնագիտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում «Բուհ-դպրոց» կապերի բաժնի պլանավորած աշխատանքները կատարվել են համալսարանի տարբեր ստորաբաժանումների հետ համագործակցելու շնորհիվ, այդ թվում ուսումնական մասի, դեկանատների, ամբիոնների, ՈԱԿ, ՄՌԿ բաժնի, մշակույթի կենտրոնի, խմբագրության, քոլեջի և վարժարանի հետ: 2018թ. Լոռու մարզի դպրոցների հետ տարվել են բազմաբնույթ աշխատանքներ:

2018 թ. անցկացվել են հայկական, ռուսական պոեզիայի ասմունքի մրցույթներ Լոռու մարզի դպրոցների IX-XII դասարանների աշակերտների համար: Ասմունքի մրցույթները դարձել են «Բուհ-դպրոց» կապերի համագործակցության արդյունավետության դրսևորման մի ձև, որոնք հիմնական նպատակների հետ մեկտեղ հնարավորություն են ստեղծում աշակերտներին տեղեկատվություն հաղորդելու մեր համալսարանի մասնագիտությունների և ուսումնանյութական բազայի մասին և կողմնորոշելու դեպի մեր բուհ: Յուրաքանչյուր մրցույթին մասնակցություն են ունենում Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի, Ալավերդի, Ստեփանավան, Տաշիր, Սպիտակ քաղաքների և նրանց տարածաշրջանների դպրոցների աշակերտներ: 2018 թ. անցկացված ասմունքի մրցույթներին մասնակցել են թվով 103 աշակերտ: Այդ մրցույթների մասնակիցներից մեր համալսարան դիմել և ընդունվել են 13 դիմորդ:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



2018 թ. մարտ-ապրիլ ամիսներին անցկացվել են առարկայական օլիմպիադաներ ինֆորմատիկա, ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, կերպարվեստ, երաժշտություն առարկաներից: Օլիմպիադաներին մասնակցել են Լոռու մարզի դպրոցների X-XII դասարանների 831 աշակերտներ, այդ թվում Վանաձոր քաղաքի ավագ և միջնակարգ դպրոցներից, ՎՊՀ հենակետային վարժարանից, «Էվրիկա» դպրոցից, Գուգարքի, Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Ալավերդու տարածաշրջանների դպրոցներից: Նախորդ տարվա համեմատությամբ մասնակիցների թիվը աճել է 10%-ով: Հումանիտար հոսքում մասնակցել են թվով 534 աշակերտ, բնագիտական հոսքում՝ 297, այդ թվում՝ X դասարանի թվով 376 աշակերտ, XI դասարանի՝ 342 աշակերտ և XII դասարանի՝ 113 աշակերտ:


Թվով 70 աշակերտներ արժանացել են I, II, III կարգի դիպլոմների, այդ թվում 20-ը՝ բնագիտական հոսքից, 50-ը՝ հումանիտար հոսքից, իսկ 40 աշակերտ առարկայական հանձնաժողովների որոշմամբ խրախուսվել են շնորհակալագրերով:

Օլիմպիադաների ընթացքում կատարված հարցումների արդյունքներից XII դասարանի 113 մասնակիցներից 80-ը նախնական ցանկություն են հայտնել սովորելու

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

մեր համալսարանում, իսկ ընդունելության արդյունքներից՝ նրանցից 66-ը ընդունվել է մեր համալսարան: Այդ թվում 4 աշակերտ, որոնք արժանացել են մրցանակային առաջին տեղին, գործող կարգի համաձայն, հնարավորություն ունեն օգտվելու ուսման վճարի մասնակի փոխհատուցման արտոնությունից: Ուրախալի է, որ 3 աշակերտ ընդունվել է ուսուցման անվճար համակարգ և միայն վճարովի համակարգ ընդունված 1 աշակերտ կարող է օգտվել նշված արտոնությունից: Մա փաստում է, որ անկողմնակալ են եղել մեր հանձնաժողովները, մշակված հանձնարարականներն էլ բավարարել են միասնական քննություններին ներկայացվող պահանջները:



2018թ. անցկացվել են բաց դասեր ք. Վանաձորի ավագ և հիմնական դպրոցների VII-XII դասարանների աշակերտների համար: Դասերը անցկացվել են ք. Վանաձորի դպրոցներում և մեր համալսարանում: Բաց դասերի անցկացումը կատարվել է ոչ միայն մեր համալսարանի նախաձեռնությամբ, այլ նաև ուսուցիչների առաջարկությամբ: 2018 թթ. 3, 8, 11, 23, Էվրիկա դպրոցների, ՎՊՀ վարժարանի, ՎՊՀ քոլեջի աշակերտները ակտիվ մասնակցություն են ունեցել կենսաբանություն, ինֆորմատիկա, հայոց լեզու առարկաների դասերին և հետաքրքրաշարժ փորձերին: Բաց դասերի անցկացումը նպաստում է համալսարանի դասախոսների և

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ուսուցիչների համագործակցության շրջանակների ընդլայնմանը, մասնագիտական փորձի փոխանակմանը և դիմորդների հավաքագրմանը:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների առմամբ էլ կան ձեռքբերումներ:

2018 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմավորվել են մարզի դպրոցներ այցելող խմբեր: Հանդիպումները հաստատված ժամանակացույցով անցկացվել են մարզի թվով 38 դպրոցներում, այդ թվում՝ ՎՊՀ վարժարանում, Լոռու մարզի և Վանաձոր քաղաքի ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել և գովազդվել են ՎՊՀ-ի 2019-2020թ.թ. ուստարվա ընդունելության առկա և հեռակա ուսուցման համակարգերի մասնագիտությունները, տարվել է բացատրական աշխատանք ընդունելության կարգի, բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական աստիճանների ուսուցման կարգի, ուսման վարձավճարների, ուսանողական նպաստների և գեղչերի, ընդունելության նախապատրաստական դասընթացների մասին: Դպրոցներին տրամադրվել են համալսարանի, ՎՊՀ վարժարանի, քոլեջի մասին անհրաժեշտ նյութեր: Այցելություն կատարած դպրոցների 12-րդ դասարանների աշակերտներից թվով 270-ը կողմնորոշված են դիմելու մեր համալսարան:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ կատարվել են նաև կրթական կենտրոններում: Անցկացվել են խորհրդատվություններ կրթական կենտրոնների մեթոդիստների համար, կազմվել և հաստատվել են աշխատանքային պլաններ, տրամադրվել են տեղեկատվական նյութեր, տրվել են հանձնարարականներ (մասնագիտությունների գովազդում, կողմնորոշում, կայքէջի դիտում, տեղեկատվության տարածում և այլն) և շեշտադրումը դրվել է դիմորդների հավաքագրման և թվաքանակի աճի վրա: Մեթոդիստները անցկացրել են մասնագիտական կողմնորոշման հարցումներ և խորհրդատվական աշխատանքներ իրենց տարածաշրջանների աշակերտության շրջանում: 2018թ. առկա ուսուցման համակարգ դիմել են Սպիտակի տարածաշրջանից՝ 22 աշակերտ, Ալավերդու


ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

տարածաշրջանից՝ 10, Ստեփանավանի տարածաշրջանից՝ 17, Տաշիրի տարածաշրջանից՝ 5 դիմորդ:

2018 թ. ապրիլին «Բուհ-դպրոց» կապերի շրջանակներում ՎՊՀ –ում անցկացվեց Լոռու մարզի դպրոցների հոգեբանների սեմինար «Դպրոցականների սոցիալ-հոգեբանական զարգացման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով:

Սեմինար պարապմունքին մասնակցեցին Լոռու մարզի դպրոցների թվով 33 հոգեբաններ: Սեմինարը վարում էին համալսարանի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Զարուհի Գրիգորյանը և դասախոս Նունե Հովսեփյանը:



2017 թ. հոկտեմբերի 3-ից մինչև 2018 թ. մայիսի 31-ը կազմակերպվել և անցկացվել են նախապատրաստական ավճար դասընթացներ ՎՊՀ-ի 2018-2019 ուստարվա դիմորդների համար: Նախապատրաստական դասընթացներին հայտագրվել են թվով 35 աշակերտներ, որոնցից պարապմունքներին մշտական մասնակցել են թվով 25 -ը: Դասընթացներին մասնակցել են Վանաձորի թ. 5, 10, 11, 13, 17 ավագ դպրոցների, ՎՊՀ վարժարանի, Մարգահովիտ, Գուգարք գյուղերի միջնակարգ դպրոցների XII դասարանների աշակերտներ (այդ թվում նաև XI դասարանի 6 աշակերտ):

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՎՊՀ-ի առկա ուսուցման համակարգ դիմել է թվով 23 աշակերտ, որից 18-ը ընդունվել է մեր համալսարան, այդ թվում՝ 3-ը անվճար, մի քանի աշակերտ չի մասնակցել քննություններին: Ընդհանուր արդյունքում դասընթացների արդյունավետությունը դիմորդների և ընդունվածների տոկոսային հարաբերությամբ կազմում է 78%:

2019-2020 ուստարվա ընդունելության համար նմանապես կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ, որոնց մասնակցում են XII դասարանների 50 աշակերտներ, այդ թվում Շահումյան, Արջուտ, Ազնվաձոր, Լեոնապատ, Դարպաս գյուղերի միջն. դպրոցների, Վանաձորի թ. 5, 10, 11, 13, 17, 18, 24 ավագ դպրոցների, ՎՊՀ վարժարանի և քոլեջի աշակերտներ: Առարկայական խմբերը ձևավորվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, կենսաբանություն, քիմիա, մաթեմատիկա, պատմություն առարկաներից:

2018 թ. փետրվարին «ՀՀ մանուկներ» հիմնադրամի մասնագիտական կողմնորոշման աշխատանքների շրջանակներում գ. Մարցի դպրոցի IX-XII դասարանների թվով 7 աշակերտներ մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելեցին համալսարան և իրենց հետաքրքրող մասնագիտության մասին տեղեկացան ԱԻՀ և ՖԴ ամբիոնի վարիչ՝ Չ. Էվոյանից:

2018 թ. ապրիլին պատմության ամբիոնի դոցենտ Աշոտ Սահակյանը Հայաստանի առաջին Հանրապետության կազմավորման 100-ամյակին նվիրված թեմաներով՝ «Մայիսյան հերոսամարտեր», «Ղարաքիլիսայի ճակատամարտը», «Հայաստանի առաջին Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ» և այլն, դասախոսություններ է անցկացրել ՎՊՀ հենակետային վարժարանում, քոլեջում և Ալավերդու կրթական կենտրոն՝ թ. 2 հիմնական դպրոցում:

Հաշվետու ժամանակաշրջանում դպրոցների հետ տարվող աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՎՊՀ ամբիոնները:

Ամբիոնները մասնակցել են դպրոցներում տարվող մասնագիտական կողմնորոշման հանդիպումներին, դպրոցականների առարկայական օլիմպիադաների

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

անցկացմանը, ընդունելության քննությունների նախապատրաստական դասընթացներին:

Ամբիոն	Կատարված աշխատանքներ
Գրականության, ռուսաց լեզվի	Գրականության և ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսները մշտապես ընդգրկված են ասմունքի մրցույթների անցկացմանը: 2018 թ. նոյեմբերին ք. Վանաձորի թ. 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները մասնակցեցին բանասիրական ֆակուլտետի ռ.լ.գ. 4-րդ կուրսի ուսանող պրակտիկանտների նախաձեռնությամբ կազմակերպած ինտելեկտուալ միջոցառում-վիկտորինային:
Հայոց լեզվի	Ամբիոնի կողմից անցկացվել են բաց դասեր թ. 8 հիմնական դպրոցի աշակերտների համար, դասախոս Ն. Անտոնյան:
Օտար լեզուների	2018 թ. մարտին և ապրիլին օտար լեզուների ամբիոնը Լոռու մարզի X, XI և XII դասարանների դպրոցականների համար երկու փուլով դպրոցների անցկացրել է „SPELLING BEE,, մրցույթ, որի նպատակն էր պարզելու անգլերենի ուղղագրությանը տիրապետելու մակարդակը: 2018 թ. մայիսին անցկացրել է ավագ դպրոցների աշակերտների վիկտորինա-մրցույթ՝ «Ամեն ինչ Մեծ Բրիտանիայի մասին» խորագրով: «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության որոշ ուսանողներ համալսարանի և թ. 19 հիմնական դպրոցի միջև կնքված հուշագրի շրջանակներում կամավորության սկուզբունքով 5-7-րդ դասարանների աշակերտների համար անցկացրել են անգլերենի արտադասարնային պարապմունքներ:
Հայոց լեզվի, ռուսաց լեզվի	Կազմակերպված գիտաժողովներին մասնակցել են նաև մարզի դպրոցների ուսուցիչներ:
Մանկավարժության, Հոգեբանության, արվեստի	Ամբիոնների կողմից անցկացվել են մասնագիտական սեմինարներ, անցկացվել են մասնագիտական կողմնորոշման զրույցներ Վանաձորի հիմնական և ավագ դպրոցներում:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

	2018 թ. մարտին ք. Վանաձորի թ. 18 միջն. դպրոցի X դասարանի թվով 15 աշակերտներ դասղեկի հետ միասին շրջայցի եկան ՎՊՀ (Լ. Մարուքյան), ծանոթացան համալսարանի գրադարաններին, լաբորատորիաներին, կաբինետներին և այլն:
Մաթեմատիկայի Ինֆորմատիկայի	Անցկացվել են մասնագիտական կողմնորոշման զրույցներ և բաց դաս Էվրիկա դպրոցներում:
Ֆիզիկայի	Անցկացվել են փորձարարական բաց դասեր՝ թ. 5, 11, Էվրիկա դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների համար՝ մեխանիկա, մոլեկուլյար ֆիզիկա, էլեկտրականություն, օպտիկա և ատոմային ֆիզիկա բաժիններից:
Քիմիայի Կենսաբանության	Դեկտեմբերին անցկացվել է «Ֆակուլտետի բաց դռների օր» բաց դասեր, կատարվել են փորձերի ցուցադրում, անցկացվել է բաս դաս:
Տնտեսագիտության Փիլիսոփայության Պատմության Արվեստի	Մասնակցել են ավագ դպրոցների աշակերտների հետ տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին:

Կատարված աշխատանքները լուսաբանվել են ՎՊՀ կայքէջում, «Վանաձորի պետական համալսարան» թերթերում:

Աշխատանքները համակարգվել են 0.5 հաստիք պաշտոնակալող աշխատողի կողմից, որին օգնել են աշխատանքային խմբերը: Ընդունելով, որ տարածաշրջանը և կենտրոնները որոշակիորեն նպաստում են մրցույթների, օլիմպիադաների և այլ տիպի միջոցառումների կազմակերպմանը, միաժամանակ էլնելով համալսարանի առջև կանգնած ֆինանսական խնդիրներից, հաստիքների զսպման քաղաքականությունից՝ ճիշտ եմ համարում կենտրոնների լուծարումը և օգտագործվող 2 հաստիքներից 0.5-ի օգտագործումը աշխատանքները համակարգողի համար:

Ուսանողական համակազմ

Վերջին 3 տարիներին արձանագրվում է ուսանողական համակազմի կայուն նվազում (10-11%), մինչդեռ 2016-ի նվազումը 2015-ի նկատմամբ եղել է 1.3%:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


2018 թ. գործունեության հաշվետվություն

Ժողովրդագրական տեղաշարժերը, սոցիալական խնդիրները, աղքատության շեմը չհաղթահարելը, այլ տարածաշրջաններից և պետություններից ուսանողների քննաշրջաններին մասնակցելու դժվարությունները, ուսման անհրաժեշտ որակի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ մեր կողմից գիտակցաբար սահմանված չափանիշները նպաստում են հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվի նվազմանը: Այլ կերպ վարվելը տեղ է բացում կոռուպցիայի համար:

Խնդիրը կարող է շտկվել, եթե բուհին հաջողվի 2020թ. հետո ներդնել հեռավար կրթության համակարգը. 2018թ. սկսվել են համապատասխան կրթական հարթակի ստեղծման աշխատանքները, փորձնական փուլում է պիլոտային ծրագիրը:

Ուսանողների համակազմն այսպիսին է.

	Ուսումնական տարի			
	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական համակազմը	2829	2795	2492	2253
Հեռակա ուսուցման համակազմը	1454	1297	1112	900
Հեռակա ուսուցման հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	51.4	46.4	44.6	39.9



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն


Ցավոտ խնդիր է հատկապես վճարովի համակարգի ուսանողների թվի նվազումը: Եթե 2015 թ. հեռակայող ուսանողները կազմում էին ընդհանուր համակազմի 88.3%-ը, ապա 2018 թ.՝ 72.6%-ը:

2018 թ. վճարովի համակարգում սովորողների հարաբերակցությունը ընդհանուրին այսպիսին է.

	Ուսումնական տարի			
	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական համակազմ	2829	2795	2492	2253
Բակալավրիատ (առկա)	1097	1359	1274	1213
Հեռակա ուսուցում	1454	1297	1112	900
Մագիստրատուրա	278	139	106	140
Ուսանողների թվաքանակը վճարովի համակարգում, ընդամենը	2596	2516	2208	1962
Բակալավրիատ (առկա)	921	1134	1037	971
Բակալավրիատ (հեռակա)	1442	1285	1103	891
Մագիստրատուրա	233	97	68	100
Վճարովի համակարգի հաշվեկշիռը հիմնական համակազմում (%)	91.8	90	88.6	87.1

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



Դիմորդների թվի որոշ մասնագիտությունների նկատմամբ ուռճացված հետաքրքրության նվազումը, աշխատավայրի ընձեռած հնարավորությունները այսօր ուղղակիորեն ազդում են որոշ մասնագիտությունների դիմորդների, ապա և ուսանողների թվի նվազման վրա:

Այսպես, «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության ներդրումը թուլացրել է մրցակցությունը «Կառավարում» մասնագիտության դիմորդների մոտ, առանց մրցակցության նվազում է նաև «Անզկերեն լեզու և գրականություն» մասնագիտության նկատմամբ հետքրքրությունը, փոքր-ինչ ավելացել է «Մերվիս» մասնագիտության նկատմամբ ունեցած հետքրքրությունը:

Մասնագիտությունների հայտարարության ժամանակ, որքան էլ դեկավարությունը պահանջում է հաշվի առնել ռիսկերը, ֆակուլտետային գիտխորհուրդները ելնում են իրենց ամբիոնների նեղ շահերից: Նոր կրթական ծրագրերի ներդրման համար հայտ չի ներկայացվում կամ ներկայացվում է միայն հայտարարման պահին, մինչդեռ, ըստ բուհում գործող կարգի, պետք է նախապատրաստվեր լիցենզավորումը, հետևաբար նաև ԿԾ-ի ստեղծումը 1.5-2 տարի առաջ: 2019թ. համար միայն մեկ նոր ԿԾ-ի ներդրման հայտ է եղել՝ «Անձի հոգեբանություն» մագիստրոսական ծրագիրը: Վերջինս ուղղակիորեն է ազդում նաև ուսանողական համակազմի ձևավորման վրա: Ուսանողների թվի տատանման (հատկապես առկա ուսուցման համակարգի) վրա ուղղակիորեն է ազդում արական

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

սեռի ուսանողների գորակոչը. վերադառնում են հիմնականում հեռակա ուսուցման համակարգ:

Ուսումնական տարվա կտրվածքով տարբեր հիմքերով արձանագրվում է ուսանողական համակազմի թվաքանակի փոփոխություն:

2018 թ. շարժն այսպիսին է.

	Ուսանողների թիվ	Ուսանողների շարժ															Ուսանողների թիվ	
		Հեռացում	Զինձառայություն	Վերականգնում	Վերականգնում գինձառայությունից	Քոլեջից ընդունելություն	Շարժունություն դեպի այլ երկիր	Սյլ բուհ	Ներբուհական շարժ(+)	Ներբուհական շարժ(-)	Սյլ բուհից	Տարկետում	Կցագրման հրամանի չեղյալ հայտարարում	Ընդունված ուսանողներ	Շրջանավարտ	Չավարտած ուսանողներ		Երկտարեցներ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Առկա	1213	37	40	18	29	1	7	1	1	0	2	0	13	190	307	0	3	1049
Հեռակա	900	69	12	67	49	13	0	0	0	1	1	4	8	68	190	0	9	814
Մագիստրատուրա	140	7	1	7	0	0	0	0	0	0	0	0	18	79	76	3	0	121
Ընդամենը	2253	113	53	92	78	14	7	1	1	1	3	4	39	337	573	3	12	1984

Աղյուսակը փաստում է, որ ներքին շարժունություն և՛ համալսարանի, և՛ ՀՀ-ի կտրվածքով իրականում չկա: 3%-ով աճել է դիմումով ուսումը ընդհատողների թիվը (2017թ. նկատմամբ), գրեթե կրկնակի աճել է տարբեր պատճառներով համալսարանից հեռացվածների թիվը (գորակոչը և տարկետումը այստեղ չեն ներառված):

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Շարժի դիմումների մերժման երկու հիմք կարող է լինել. լիցենզիայով հատկացված թափուր տեղերի բացակայություն, քննական առարկայական տարբերությունների 20 կրեդիտի սահմանի հատում. վերջին դեպքում դիմումատուին առաջարկվում է ավելի ցածր կիսամյակում ուսանելու հնարավորություն:

Վարձավճարների ուշացման պատճառով ուսանողը տարիներ ի վեր գրեթե չի հեռացվում: Նույնը կատարվել է 2018թ.: Համալսարանը հետևողականորեն ուսանողի դիմումի կամ ուսանողի պայմանագրին կցված համաձայնագրի միջոցով տարել է ուսման վճարը մաս-մաս գանձելու գործընթաց՝ առանց այդ մասին թմբկահարելու: Չնայած ֆինանսական հաշվառման գործընթացում աշխատանքի ծավալի մեծացմանը՝ այս իրողությունը եղել է ն՝ կա: Բացառություն չէ 2018 թվականը:

Պայմանագրային պարտականությունները չկատարելու հիմքով 2018թ. հեռացվել է նման 8 ուսանող, սակայն վերջիններս ունեցել են նաև ակադեմիական պարտքեր:

2018 թ. ռեկտորի ֆոնդին հատկացված 5 մլն դրամից 3 377 500-ը նպատակաուղղվել է սոցիալապես անապահով կամ այլ տարակարգերի ուսանողներից 36-ի վարձավճարին, 580 000 դրամ տրամադրվել է ուսանողների խրախուսմանը՝ ըստ գործող կարգի, 7 ուսանող էլ խրախուսվել է «Լավագույն ուսանող» մրցույթում հաղթելու համար:

Բուհի համար կարևոր է առաջին կուրսից երկրորդ կուրս անցումը. այստեղ ունենք դրական տեղաշարժ՝ 13.6%-ով բակալավրիատի համակարգում, 9%՝ մագիստրատուրայում:

Շրջանավարտների թիվը, պայմանավորված 2013, 2014 ընդունելության թվերով, գերազանցում է ընդունելության թվին: 2018թ. տվել ենք 585 շրջանավարտ, որից առկա համակարգում՝ 310, հեռակա ուսուցման համակարգում՝ 199, մագիստրատուրայում՝ 76:

Շարժունության ծրագրով 2018-ին արտերկրում սովորել է 7 ուսանող:

Այստեղ նկատվում է նվազում՝ պայմանավորված դրամաշնորհների (գրանտների) մեջ ընդգրկվածության աստիճանի նվազմամբ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Հետբուհական կրթությունը մեր համալսարանում ներդրված է հայցորդության համակարգով. ունենք 11 հայցորդ: Առկա են խնդիրներ, որոնք բացարձակապես չեն տարբերվում նախորդ տարիների խնդիրներից. հիմնական պատճառներից մեկը կարելի է համարել քննարկման փուլում գտնվող «ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին» նոր օրենքով նախատեսված հայցորդության ինստիտուտի վերացումը:

Համաձայն նախնական տարբերակի՝ գիտական կադրերի պատրաստման միակ ուղին ասպիրանտուրան (դոկտորանտուրան) է: Սակայն վերջին տասը տարիների ընթացքում մեր համալսարանին ՀՀ կառավարության կողմից հատկացվել է ասպիրանտուրայի միայն մեկ անվճար տեղ (հեռակա ուսուցմամբ)՝ 2016թ. Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությունից, որը, սակայն, մնաց թափուր՝ դիմորդի՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու պատճառով: 2019 թ. ևս տեղ չի հատկացվել, չնայած դիմել ենք երկու անգամ (երկրորդը պահուստային տեղերից հատկացման խնդրանքով):


ՎՊՀ-ում ասպիրանտական կրթության զարգացմանը, բացի տնտեսական պատճառներից, մեծապես խոչընդոտում է ասպիրանտուրայի ընդունելության պարտադիր նախապայմանի՝ օտար լեզվի իմացության (TOEFLE ծրագրով) հավաստագրերի առկայության անհրաժեշտությունը: Համապատասխան դասընթացներին մասնակցելու և քննություն հանձնելու համար ցանկացողները ստիպված են շաբաթական մի քանի անգամ հասնել մայրաքաղաք, ինչն անհնարին է աշխատող կամ ուսանող ապագա դիմորդների համար:

Առաջադիմություն

Համալսարանի ուսանողների առաջադիմությունը կարելի է հուսադրող համարել. վերջին երկու տարում անգամ հեռակա համակարգում սովորողների առաջադիմությունը բարձրացել է.

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



Առաջադիմությունը սովորաբար ավելի բարձր է լինում գարնանային քննաշրջանի ժամանակ: Նույնը կատարվել է 2017-2018 թ. փոխադրական և 2018-19 թ. հունվարյան քննաշրջանի ժամանակ (Տե՛ս հավելված թիվ 1):

Առկա ուսուցման համակարգի ուսանողների շուրջ 25%-ը սովորում է միայն գերազանց, իսկ 35%-ը՝ «լավ» և «գերազանց» գնահատականներով, կարևոր է նաև միայն «բավարար» գնահատականներով սովորողների ցածր տեսակարար կշիռը. այն տատանվում է 8-10%-ի միջակայքում: Շատ ավելի բարձր արդյունքներ ունենք մագիստրոսական կրթության համակարգում. միայն «գերազանց» գնահատականներով սովորում է մագիստրանտների 53.5%-ը, «լավ» և «գերազանց» գնահատականներով՝ 35%-ը, միայն «բավարար»-ով սովորում է մեկ մագիստրանտ:

Առկա ուսուցման համակարգում ամենացածրը՝ 89%, առաջին կուրսերի առաջադիմությունն է. իհարկե, այդ ցուցանիշը բացարձակապես բավարարող է, և ընդունելի է ցածր դիտարկելը:

Հեռակա ուսուցման համակարգում ավանդաբար ավելի ցածր է լինում առաջադիմությունը. այն վերջին երկու կիսամյակում տատանվել է 64-67%-ի

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

միջակայքում: Այստեղ մեծանում է «գերազանց» և «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը:

Առաջադիմության ցուցանիշ ենք համարել բուն քննաշրջանը. պարտքերի մարումից հետո պատկերը որոշակիորեն բարելավվում է: Ուսուցման բոլոր համակարգերի համար ցուցանիշը բավարար է: Առկա ուսուցման համակարգում շատ մեծ դեր ունի գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը: Ընթացիկ ստուգումների ժամանակ ստուգվում է 6-7 շաբաթների ընթացքում ուսումնասիրված նյութը, և ավելի դյուրին է դառնում յուրացումը, մյուս նշանակալից գործոնը սեմինար, լաբորատոր աշխատանքների կշռի մեծացումն է դասախոսություն բաղադրիչի նկատմամբ, նույն քայլը կատարվել է նաև հեռակա ուսուցման համակարգում. գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին մասնակցությունը և գնահատումը մեծապես նպաստում են ստուգարքին ներկայացվող պահանջների բավարարմանը. ուսանողը լրացուցիչ չի ներկայանում ստուգման: Կարևոր գործոն է նաև հեռակա համակարգում քննաշրջանին և տեսական դասընթացներին մինչև 8 շաբաթ ինքնուրույն աշխատանքներին հատկացնելը: Ուսանողը բավարար ժամանակ է ունենում քննություններին նախապատրաստվելու համար. ստուգարքին ներկայանալը, եթե տեսական դասընթացների ժամանակ գնահատվել է, չի բացակայել և մինչ քննական փուլը ներկայացրել է ինքնուրույն աշխատանքները, պարտադիր չէ:

Որքան էլ փորձենք չընդունել առկա ուսուցման համակարգում ներդրված բազմագործոնային գնահատումը, չպետք է անտեսենք այն փաստը, որ ուսանողների հիմնական մասը չի ներկայանում հանրագումարային քննության՝ բավարարվելով բակալավրիատի ընթացիկ քննությունների ժամանակ ձեռքբերածով և հունվար, հունիս ամիսների 2-ական քննական շաբաթները հատկացնում է հանգստին կամ իրեն հետաքրքրող այլ խնդիրների լուծմանը: 2018-19 ուստարվա հունվարյան քննաշրջանի արդյունքների անգամ ոչ խորքային վերլուծությունը բացահայտում է, որ 2018-19 ուստարվա առաջին կիսամյակում 71 կուրսում (հիմնականում բակալավրի կրթական ծրագրի 1-3 և մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսերում) կազմակերպվել է 181

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ընթացիկ քննություն, որին մասնակցել է 824 ուսանող: Դրական գնահատական է ստացել 780 ուսանող՝ 95%:

Ըստ «քննություն» չափանիշի՝ 100% առաջադիմություն է դրսևորվել 141 քննության դեպքում (78%), իսկ ընդհանուր միջին առաջադիմությունը 97% է, որտեղ.

- բանասիրական ֆակուլտետում 98.8%
- կենսաբանաքիմիական ֆակուլտետում 96.9%
- մանկավարժության ֆակուլտետում 95.5 %
- պատմաշխարհագրական ֆակուլտետում 98.3%
- ֆիզմաթ ֆակուլտետում 96.4 %

Ամենացածր առաջադիմություն ունեցել են «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները՝ 63.2%:

Հանրագումարային քննության ժամանակ գնահատականի բարձրացում կատարվել է 58 քննության (131 ուսանող-քննություն) դեպքում՝ 32%, որից գնահատականը բարձրացրած ուսանողների ամենաբարձր տոկոսը նկատվել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսում՝ 85.7%:

Ցանկանում եմ նշել, որ նշված 58 քննության ընթացիկ ստուգումների ժամանակ 37 դասընթացի քննության դեպքում գրանցված է եղել 100% առաջադիմություն:

Փաստորեն, ընթացիկ քննություններին մասնակցած ուսանողների 95%-ը, ունենալով դրական գնահատականներ, չի մասնակցում հանրագումարային քննությանը, և արդեն դեկտեմբերի վերջին նրանք ունենում են համարժեք կրեդիտի ձեռքբերում: Ընթացիկ քննություններին մասնակցած ուսանողների մոտ 1/3-ը բարելավել է իր գնահատականը:

2018թ. որակավորման ավարտական քննություններ է հանձնել 585 ուսանող՝ ըստ համակարգերի.

Առկա ուսուցում

Բակալավրիատ - 310

Մագիստրատուրա - 76

Հեռակա ուսուցում

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Բակալավրիատ - 199

Վերոբերյալ 576 թիվը իր մեջ չի ներառել երկտարեցիների թիվը:

Շարունակական կրթության համակարգ

Համալսարանում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում շարունակական կրթության կազմակերպմանը, որը հանգեցնում է անհատի գիտելիքների, հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի կատարելագործմանը՝ միաժամանակ ապահովելով անհատի կողմից ուսումնառության ձևի ընտրության ճկունությունը, սոցիալական շարժունությունը, անհատական ակտիվ զարգացումը և սոցիալականացման բարձր մակարդակը:

Ոչ ֆորմալ կրթության կազմակերպման շրջանակներում 2018թ. շարունակական կրթություն է իրականացվել մի քանի ուղղություններով.

1. լեզվական կարողությունների զարգացման դասընթացներ. ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուների ուսուցում, որին մասնակցել են 178 ունկնդիր լեզվական տարբեր մակարդակներով (A1, A2, B1, B2):
2. Մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ.
 - «Ներառական կրթություն» - 7 ունկնդիր,
 - «Բրուտագործություն»-4 ունկնդիր,
 - «Գեշտալտ թերապիա»-26 ունկնդիր:

Շարունակական կրթությունը հիմնականում հետաքրքրում է աշխատաշուկայում արդեն իսկ կողմնորոշված շրջանավարտներին: Դասընթացներին մասնակցում էին տարբեր տարիքային խմբերի ունկնդիրներ Լոռու մարզի տարածաշրջանից:

Ուսուցման ընթացքում կիրառվում է խառը ուսուցման մեթոդը (blended learning). հեռավար ուսուցման զուգադրումը հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացից որոշ բաղադրիչներ իրականացնել առանց արտադրությունից կտրվելու: Ներկայումս ամբիոնների կողմից մշակվում են նոր դասընթացներ՝ տարբեր բնագավառների շահառուներ ներգրավելու նպատակով: Աշխատանքները

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

համակարգում է Համալսարանում գործող շարունակական կրթության կենտրոնը, որը նշված աշխատանքներին զուգահեռ պլանավորում է համագործակցել գործատուների հետ, արդյունքում մշակել կորպորատիվ փաթեթներ և կազմակերպել դասընթացներ՝ ըստ ներկայացված պահանջարկի:

Համալսարանում յուրաքանչյուր կիսամյակ կազմակերպվում են դասախոսների վերապատրաստման դասընթացներ, որոնց 2018թ. մասնակցել է 30 դասախոս.

- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության բարելավման դասընթացներ-11 դասախոս,
- անգլերենը ակադեմիական միջավայրում-6 դասախոս,
- մանկավարժահոգեբանական պատարատվածության բարելավման դասընթացներ-13 դասախոս:

Համալսարանում կարևորվում է վերապատրաստման դասընթացների արդյունավետության բարձրացումը: Այն իր մեջ ընդգրկում է ամբիոնների կողմից դասընթացների թեմաների ընտրության, դասավանդման արդյունավետության բարձրացման և մեթոդների ընտրության հարցերը, որոնք պետք է միտված լինեն ինչպես դասախոսների տեսական և գործնական գիտելիքների թարմացմանը, բարելավմանը, այնպես էլ դասավանդման գործընթացներում նրանց առաջ ծառայած մասնագիտական և մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից մեթոդների հետ ծանոթացմանը և յուրացմանը:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման գործընթացներում խիստ կարևոր է մարդկային ռեսուրսների գնահատումը և ռիսկերի վտանգավորության աստիճանի որոշումը, դրանց կանխարգելմանը կամ թուլացմանը ուղղված հստակ գործողությունների և քայլերի առաջնահերթության որոշումը: Մենք խնդիր ունենք և՛ արտաքին (այլ մրցունակ բուհերի առկայություն, հասարակական վերաբերմունքի փոփոխություն) և՛ ներքին ռիսկերի (կրթական ծառայությունների որակի նվազում, աշխատաշուկայի պահանջների բավարարում, մակարդակի, ուսանողների թվաքանակի կրճատում, աշխատողների ցածր աշխատավարձ) առմամբ. մյուս ռիսկերը ևս նվազ չափով առկա են (ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում և այլն):

Մարդկային ռեսուրսների կառավարումը տարբեր մակարդակներում (ֆակուլտետ, ամբիոն, ստորաբաժանում) հիմնականում ուղղել ենք ռիսկերի թուլացմանը:

Գործողություններից են.

- պրոֆեսորադասախոսական հաստիքների հաշվարկը ուսումնական տարվա համար (2017-18, 2018-19 հավելված 3),

- զբաղեցվող հաստիքների 4 տարակարգերի պաշտոնակալման հնարավոր սահմանի որոշումը,

- հաստիքի ձևավորման ժամաքանակի չափորոշիչների հաստատումը,

- մասնագիտությունների ցանկի ճշտումը,

- համահամալսարանական դասընթացների օպտիմալացումը անգամ գործնական և սեմինար պարապմունքների առմամբ և այլն:

Ելնելով ունեցած լսարանային պայմաններից կազմել և կազմում ենք հոսքեր համահամալսարանական դասընթացների համար. հոսքը չի կարող 51 ուսանողից ավելին լինել, քանի որ մեր ամենամեծ լսարանը 104 քառ. մ է (1 ուսանողին պետք է

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


2018 թ. գործունեության հաշվետվություն

տրամադրվի 2-2.25մ² տարածք): Եթե նախկինում հոսքերը կազմում էինք ֆակուլտետի ներքում, ապա 2018թ.-ին գնացել ենք նաև միջֆակուլտետային հոսքեր ստեղծելու ճանապարհով: Հոսք (մինչև 21 ուսանող) կազմել ենք նաև գործնական պարապմունքների և սեմինարների համար (մինչև 31 ուսանող): Այս քայլերի ժամանակ չենք անտեսել որակի պահպանման խնդիրը:

Դասախոսական համակազմ

Դասախոսական համակազմը ավանդաբար ձևավորվում է երկու ճանապարհով՝ մրցութային և տվյալ ուսումնական տարվա համար հրավիրված. այս դեպքում ունենում ենք ժամավճարային կարգով աշխատողներ.

Դասախոսական կազմ	2014/15	2015/16	2016/17	2017/18
Հիմնական և համատեղություն	195	195	217	199
Ժամավճար	68	68	33	41
Ընդամենը՝	263	263	250	240



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

2018թ. համեմատությամբ նվազել է հիմնական և համատեղությամբ աշխատողների թվաքանակը, ավելացել՝ ժամավճարով աշխատողներինը. պատճառը «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության համար մասնագետների համալրումն է: Հրավիրվել են համապատասխան համակարգերից երիտասարդ և որոշակիորեն արհեստավարժ կադրեր:

Պրոֆեսորադասախոսական հիմնական համակազմի 74% - ը ունի գիտական գիտական աստիճան և կոչում, ընդհանուրի՝ 63.27%-ը: Ցուցանիշը բավարարող է, սակայն պետք է ընդգծել, որ ցածր է գիտական աստիճան և կոչում ձեռքբերողների ցուցանիշը. 2018թ. ատենախոսություն է պաշտպանել մեկ (հաստատումը եղել է 2019թ.), դոցենտի կոչում է ստացել 4, իսկ պրոֆեսորի՝ 1 աշխատակից:

Տարեցտարի գիտական աստիճան և կաչում ձեռքբերողների թվի նվազմանը նպաստում են հետևյալ գործոնները.

- երիտասարդների մոտ դրդապատճառի պակասը,
- հանրապետությունում գործող ասպիրանտուրայի ընդունելության կարգը,
- ժողովրդագրական հարկադրված տեղաշարժի վտանգը,
- տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Պետք է նկատի ունենալ նաև այն իրողությունը, որ մի շարք ամբիոնների պրոֆեսորադասախոսական համակազմում գիտական աստիճան և կոչում ունեցողների թիվը շատ բարձր է. պաշտոնակալում է հիմնական դասախոսական կազմը և հրավիրված երիտասարդ կադրեր:

	2014/15	2015/16	2016/17	2017/18
Պատմության ամբիոն	71.42	100	90.91	100
Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոն	50	80	57.14	70

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

	2014/15	2015/16	2016/17	2017/18
Տնտեսագիտության տեսության ամբիոն	63.15	90	76.92	72.7
Մանկավարժության ամբիոն	100	100	100	100
Հայոց լեզվի ամբիոն	92.85	100	100	100
Գրականության ամբիոն	52.38	83.33	73.3	78.6
Ֆիզիկայի ամբիոն	69.23	100	100	100
Կենսաբանության ամբիոն	85.71	89.47	88.24	85
Քիմիայի ամբիոն	66.66	80	72.73	70
Արվեստի ամբիոն	64.28	80	66.67	70
Ֆիզիկական դաստիարակության և արտակարգ իրավիճակների ամբիոն	57.89	66.67	60	72.7

Խնդիրներ ունենք օտար լեզուների (վերջին 3 տարիներին արտասահման է մեկնել գիտական աստիճան ունեցող 4 երիտասարդ կադր) և ռուսաց լեզուների ամբիոնների առմամբ:

Դասախոսական հաստիք և ժամաքանակ

Հաստիքների ձևավորման հիմքում ներդրված ՄԿԾ-ների ուսումնական պլանների ժամաքանակը բխում է , ուսանողական խմբերի և ենթախմբերի թվից: (Հավելված 4, 5)

2018 թ. օգտագործված հաստիքները 2017-18 և 2018-19 ուստարվա համամասնական ազդեցության արդյունքն են:

2018-2019 ուստարվա համար բաշխվել է 158 315 ժամ, որից 87 212-ը՝ լսարանային. նշված ժամաքանակը ձևավորել է 170 հաստիք, որից շուրջ 75-ը՝

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

պրոֆեսորի և դոցենտի: Նախորդ տարվա համեմատ ժամաքանակը պակասել է 21 000 (99 322 լսարանային)-ով, ինչն էլ բերել է 13 հաստիքների կրճատմանը:

Դասախոսական հաստիքների բաշխումը ըստ տարակարգերի որոշակի խնդիրների է այսօր առաջադրում. ունենք դոցենտի գիտական աստիճան ունեցող 23 աշխատակից, որոնք դոցենտի հաստիք չեն տեղակալում, բայց չենք կարող ավելացնել դոցենտի հաստիքները և այդ տարակարգի համար հայտարարություն տալ:

Հաստիքների տրամադրման հաշվարկը կատարվում է դասախոսություն և գործնական, սեմինար, լաբորատոր աշխատանք հարաբերակցությամբ. ընդհանուր ժամաքանակից կատարվում են հատկացումներ.

	դասախոսություն	գործնական, սեմինար	լաբորատոր
Պրոֆեսոր	45%	5%	
Դոցենտ	35%	15%	
Դասախոս և ասիստենտ	20%	80%	100%

Ելնելով բուհում տարիներ ի վեր ունեցած իրողությունից՝ պրոֆեսոր/ դոցենտ հաստիքների հաշվարկը թույլատրելի սահմանի համար մեկտեղում ենք:

2018թ. հայտարարված մրցույթի ժամանակ մոտեցումը մեկն է եղել՝ դոցենտների հաստիքների համամասնությունը մոտեցնել թույլատրելի սահմանային թվին: Ցանկանում եմ նշել, որ ասիստենտի կամ դասախոսի հաստիքներից դոցենտի հաստիքի փոխադրման 3 դեպքն արդեն բերում է դոցենտի մեկ լրացուցիչ հաստիք: Համալսարանը ֆինանսական նման հնարավորություն չունի. բացի այդ պրոֆեսորի և դոցենտի աշխատանքները ևս ունեն տարբերակվածություն. մասնագիտական հիմնական դասընթացները իրականում պետք է դասավանդվեն վերջիններիս կողմից:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Համալսարանի պրոֆեսորների և դոցենտների կողմից կարդացվող տեսական դասընթացների համամասնությունը այսպիսին է.

Դոկտորներ											
Դասախոսի անուն, ազգանուն	Ընդհանուր դասընթացների քանակը	Դասընթացների քանակը	%	Մագիստրոսական թեզի քանակ	Ավարտական աշխատանք	Ժամաքանակը				Ամբիոնների ընդհանուր ժամաքանակը	
						Ընդհանուր	%	Լսարանային	%	Ընդհանուր	Լսարանային
Հայոց լեզու	42	14	33.33	2		848	10.18	354	7.70	8333	4596
Գրականություն	84	10	11.90	1		842.7	6.75	434	5.97	12476	7274
Ինֆորմատիկա	54	2	3.70		6	555.7	5.35	262	4.30	10385	6086
Կենսաբանություն	59	5	8.47		3	781.8	7.36	288	4.74	10624	6072
Քիմիա	53	4	7.55			608	7.46	254	5.82	8145	4368
ՖԻՆԱԻՀ	18	2	11.11		6	369	5.11	264	5.69	7228	4638
Մանկավարժություն	50	4	8.00		4	874.4	8.07	351	6.33	10841	5544
Պատմություն	46	5	10.87	3	7	1246	13.79	640	13.01	9034	4918
Փիլիսոփայություն և քաղաքագիտություն	56	4	7.14		4	604.2	6.45	320	6.27	9372	5100
Ընդամենը	462	50	10.82	6	30	6729.8	7.79	3167	6.52	86438	48596

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Դոցենտներ											
Ամբիոնը	Ընդհանուր դասընթացների քանակը	Դասընթացների քանակը	%	Մագիստրոսական թեզի քանակ	Ավարտական աշխատանք	Ժամաքանակը				Ամբիոնների ընդհանուր ժամաքանակը	
						Ընդհանուր	%	Լաբորանային	%	Ընդհանուր	Լաբորանային
Հայոց լեզու	42	28	66.67		19	4214.6	50.58	2062	44.87	8333	4596
Գրականություն	84	56	66.67	6	39	7151.8	57.32	4278	58.81	12476	7274
Ռուսաց լեզու	39	26	66.67	3	6	2268	29.71	1172	23.13	7634	5068
Օտար լեզու	36	16	44.44	3	11	3493.6	22.70	1402	14.25	15390	9840
Պատմություն	46	37	80.43	5	21	5835.3	64.59	3192	64.90	9034	4918
Տնտեսագիտություն	75	41	54.67		20	4899.9	37.82	2558	39.44	12957	6486
Փիլիսոփայություն և քաղաքագիտություն	56	41	73.21	2	17	4526.8	48.30	2374	46.55	9372	5100
Մանկավարժություն	50	28	56.00		12	3806.9	35.12	1781	32.12	10841	5544
Հոգեբանություն	98	39	39.80	4	17	5956.7	32.41	3045	31.66	18378	9618
Արվեստ	31	23	74.19		5	2844.4	62.09	2181	75.91	4581	2873
Մաթեմատիկա	59	56	94.92	4	14	7214.8	54.17	3832	52.04	13320	7364
Բնֆորմատիկա	54	32	59.26	1	20	3221.2	31.02	1680	27.60	10385	6086
Ֆիզիկա	28	19	67.86	2	8	2177.2	62.47	1257	60.26	3485	2086
Կենսաբանություն	59	46	77.97	2	15	4738.4	44.60	2720	44.80	10624	6072
Քիմիա	53	36	67.92	8	18	4132.7	50.74	2544	58.24	8145	4368
ՖԴ և ԱԻՀ	18	15	83.33		11	3177.3	43.96	1892	40.79	7228	4638
Ընդամենը	828	539	65.10	40	253	69659.6	42.95	37970	41.30	162183	91931

Ցանկանում եմ ընդգծել, որ ԿԾ-ների իրականացման, հետևաբար և որակի ապահովման պատասխանատվությունը հիմնականում ընկած է դոցենտի վրա՝ 65.1%, դոկտորի 10.8%-ի դիմաց: Ֆինանսական հիմնական արդյունքը ստեղծվում է առաջին հերթին դոցենտի ուժերով:

Դասավանդող և այլ աշխատակից

Խնդիրը ցանկացած բուհի համար կարևոր է: Դեռևս 2003թ. կատարված հետազոտության հավելվածում (խոսքը ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության մասին է) նշվում է վտանգների մասին (ՏԵ՛ս «Բարձրագույն կրթություն» 1-ին հատոր): Բերված 3-րդ աղյուսակում մեզ մոտ գրանցվել է 7.5 ուսանողին մեկ դասախոսի, մեկ դասախոսին՝ 1.8 չդասավանդող (մեզնից ավելի լավ վիճակում եղել է միայն ԵՊՏՀ-ը (8, 1.3)): Կատարված ուսումնասիրություններից բխում

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

է, որ դասավանդող և չդասավանդող հարաբերակցությունը ռիսկային չլինելու համար պետք է լինի խիստ հավասարակշռված և մոտ իրատեսականին:


Այս խնդրում, որքան էլ զսպել ենք հաստիքները, այնուամենայնիվ կան էական խնդիրներ. պետք է գնալ ցավոտ, բայց հնարավոր կրճատումների: 2018թ. ընդհատվել են աշխատանքային պայմանագրերը ֆուտզալի թիմի մարզիչի, ուսումնական արհեստանոցի վարիչի, գիտական աշխատախմբի ղեկավարի հետ, իջեցվել է հրաձգարանի աշխատակցի հաստիքը՝ ելնելով աշխատանքների ծավալի կրճատումից:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ ունեցել ենք հետևյալ իրավիճակը.

	2014/15	2015/16	2016/17	2017/18
Դասախոսական կազմ	263	263	250	240
Ուսումնաժամանակ, վարչական և վարչատնտեսական կազմ	190	189	190	188
Դասախոսական կազմ/ուսումնաժամանակ, վարչական, վարչատնտեսական կազմ հարաբերակցությունը	1.4	1.4	1.4	1.3

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



Կա 0.1%-ի բարելավում 2017-ի նկատմամբ, 0.5%՝ 2003թ. նկատմամբ, սա այն դեպքում, երբ ուսանողների թիվը կրճատվել է, բայց խմբերի թիվը էականորեն չի կրճատվել: Սակայն պետք է նշել, որ նշված 188 հաստիքի մեջ կան չօգտագործած հաստիքներ: Քննարկման ներկայացվող հաստիքացուցակի մեջ առաջարկվում է շուրջ 12-14 հաստիքի կրճատում և միայն 0.75 հաստիքի հավելում:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


2018 թ. գործունեության հաշվետվություն

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2018 թվականին Վանաձորի պետական համալսարանի համախառն նախահաշվի մուտքերը կազմել են 895 մլն 220 հազար 400 դրամ, որից 40 մլն 679 հազար 800 դրամը նախորդ տարվա մնացորդն է: Նախահաշիվը եկամուտների մասով կատարվել է 97,6 տոկոսով: Բյուջեի մուտքերի նվազումը վերջին տարիներին պայմանավորված է սովորողների թվի կրճատմամբ՝ 2017 թ. տարեվերջի դրությամբ 2253 ուսանողի փոխարեն 2018-ի տարեվերջին կազմել է 1984 ուսանող:

աղյուսակ 1


2016-2018 թթ. ՎՊՀ համախառն բյուջե



2018 թ. ՎՊՀ հիմնադրամի աշխատավարձի վերլուծությունն ըստ ստորաբաժանումների ունի հետևյալ տեսքը:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն




2018 թ. Վանաձորի պետական համալսարանի նախահաշվի եկամուտների 60 տոկոսը գոյացել է վճարովի ուսուցման ծառայություններից, 19 տոկոսը՝ պետական բյուջեի ֆինանսավորումից, 8.9 տոկոսը՝ հենակետային վարժարանի համար պետբյուջեի ֆինանսավորումից, 3,6 տոկոսը՝ քուլեջի վճարովի և անվճար համակարգերի ուսուցումից, 1,8 տոկոսը՝ այլ մուտքերից, 2,2 տոկոսը՝ դրամաշնորհներից (Տե՛ս աղյուսակ 2):

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Տարեկազմի մնացորդը կազմում է 4,5 տոկոս:



Աղյուսակ 2

Գործառնական գործունեությունից վճարովի ուսուցման ծառայության 537 մլն 570 հազար 100 դրամ մուտքերի գերակշիռ մասը կազմում են բակալավրիատի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները, այն կազմել է 507 մլն 55 հազար 200 դրամ: Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից ստացված եկամուտները կազմում են 28 մլն 720 հազար 900 դրամ: Հայցորդների ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները կազմել է 1 մլն 794 հազար դրամ:

Գործառնական այլ գործունեությունից՝ շարունակական կրթության և օտար լեզուների դասավանդման ծառայություններից գոյացած եկամուտները կազմել են 1 մլն 617 հազար 200 դրամ կամ բյուջեի մոտ 0.3 տոկոսը:


Ոչ գործառնական գործունեությունից ստացված եկամուտները դրամաշնորհային ծրագրերից կազմել են 19 մլն 782 հազար 300 դրամ կամ բյուջեի 2,2 տոկոսը:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

2018 թ. Վանաձորի պետական համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի միջոցների հաշվին կատարվել են 862 մլն 144 հազար 200 դրամի ծախս: Հաստատված նախահաշվի համեմատ ծախսերը կատարվել են 97,4 տոկոսով: Ծախսերի գերակշռող մասը բաժին է հասել աշխատավարձին, այն կազմել է 686 մլն 353 հազար 200 ՀՀ դրամ կամ ծախսերի 76,7 տոկոսը: Աշխատավարձի հոդվածը գերակատարվել է 1,1 տոկոսով:

Աշխատավարձի (ներառյալ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ) ծավալը 2016-2018 թթ.



2018 թվականին ՎՊՀ աշխատակիցներին վճարվել են լրավճարներ 1,4 աշխատավարձի չափով և պրոֆեսորադասախոսական անձակազմին պարգևավճարներ՝ շուրջ 8,6 մլն դրամի չափով:


2 աշխատավարձի չափով լրավճար է վճարվել նաև հենակետային վարժարանի աշխատակիցներին:

ՎԱՆԱՃՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Վանաձորի պետական համալսարանի աշխատակիցների միջին ամսական թիվը կազմում է 475 մարդ, նախորդ տարվա 477-ի փոխարեն: Միջին ամսական աշխատավարձը կազմել է 119 հազար 900 դրամ նախորդ տարվա 101 հազար 800 դրամի փոխարեն: Դա պայմանավորված է վերը նշված լրավճարներով ու պարգևավճարներով:

2018 թվականին կրթական միջավայրի զարգացման համար կատարված ծախսերի ծավալը կազմում է 28 մլն 819 հազար 500 դրամ, որից շենք-շինությունների նորոգման համար ծախսվել է 11մլն 213 հազար, լսարանների ընթացիկ նորոգումների համար 3 մլն 980 հազար 300, գրականության ձեռքբերման համար 1 մլն 718 հազար 200 և սարք-սարքավորումների ձեռքբերման համար՝ 6 մլն 908 հազար ՀՀ դրամ:




ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Կապիտալ ներդրումների առումով 2018 թ. կատարվել են ՎՊՀ ուսումնական թիվ 1 մասնաշենքի սանհանգույցների վերանորոգման, հարավային և արևելյան ճակատների պատուհանների փոխման ու նույն ճակատների ներկման աշխատանքներ:

Կապիտալ ներդրումների ծավալները 2016-2018 թթ.



Ուսանողական գիտական ընկերությանը հատկացված 1 մլն դրամը ամբողջությամբ ծախսվել է կոնֆերանսների նյութերի տպագրության, ներկայացուցչական և գործուղման նպատակով: Ուսանողական խորհրդին տրամադրվել է 297 հազար դրամ, գումարը ծախսվել է ուսանողական խորհրդի կազմակերպած միջոցառումների համար:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Կրթական էլեկտրոնային հարթակ

Համալսարանում հեռավար ուսուցման ներդրման նպատակով 2018 թ. փետրվարին բուհի նախկին ռեկտոր Գ. Խաչատրյանի նախաձեռնությամբ ստեղծվեց աշխատանքային խումբ (Ս. Թումանյան, Ա. Գևորգյան, Հ. Օհանյան, Ն. Ստեփանյան), որի աշխատանքների ընթացքը ղեկավարվում էր ռեկտորի կողմից:

Նույն ամսին «Համակարգչային տեխնիկայի ներդրման և սպասարկման» բաժնի աշխատակիցների և Հ. Օհանյանի կողմից ներկայացվեց աշխատանքային պլան, որտեղ ներառված էր հեռավար ուսուցման ներդրման համար անհրաժեշտ տեխնիկա-ծրագրային խնդիրներն ու վերջիններիս լուծմանը միտված քայլերի հերթականությունն ըստ փուլերի: (Հավելված *//////////*)

Աշխատանքների առաջին փուլում՝ 2018 թ. փետրվարին հստակեցվել են հարթակի ստեղծման բուն նպատակները, ուսումնասիրվել են ՀՀ և ՌԴ բարձրագույն ուսումնական հաստատություններում գործող էլեկտրոնային կրթական հարթակների ներդրման ու շահագործման փորձը, գործառույթները, հարթակի իրականացման և հարթակը ղեկավարող ստորաբաժանումների աշխատանքի սկզբունքները, հավաքված տեղեկատվության և Համալսարանի ռեսուրսների համադրության արդյունքում տեղայնացվել են հարթակի ստեղծման մեխանիզմները, ձևավորվել և հաստատվել է տեխնիկական առաջադրանքը:

2018 թ. փետրվար-մարտ ամիսներին համալսարանի ներքին ցանցում տեղակայվել և կարգաբերվել է երկու հատ սերվերային բլոկներից կազմված սերվերային համակարգ: Ապրիլ ամսին սերվերային բլոկներից մեկում տեղակայվել է առցանց ուսուցման կայքի աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ Moodle կրթական հարթակի ծրագրային ապահովումը, մյուսում՝ առցանց տեսադասերի

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

համակարգի աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ BigBlueButton տեսահարթակի ծրագրային ապահովումը:

Երկու համակարգերն էլ 2018 թ. մայիսին թեստավորվել և փորձարկվել են ներքին ցանցում, լուծվել են առաջացած և հնարավոր առաջացող խնդիրները, վերացվել թերությունները:

Նույն ամսին Համակարգչային տեխնիկայի ներդրման և սպասարկման բաժինը իր կադրային ռեսուրսների և Հ. Օհանյանի ներգրավումով վերակազմավորվեց՝ դառնալով Էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժին:

Փորձարկում անցնելուց հետո սերվերային համակարգը հունիս-օգոստոս ամիսներին տեղակայվել է համացանցում՝ համալսարանի vsu.am դոմենի ներքո բացված lp.vsu.am ենթադոմենի անվան տակ: Ապահովվել է նրանց հասանելիությունը համալսարանին հատկացված public ip հասցեների միջոցով, հայտնաբերվել և վերացվել են համացանցում աշխատանքի ընթացքում առաջացող խնդիրները և թերությունները: Համակարգը բերվել է շահագործման համար պատրաստի վիճակի: Իրականացվել է ուսուցման համակարգերի թարմացում, նոր տարբերակի տեղադրում և համապատասխանեցում՝ արդեն գործող կայքի հետ:

Տարաբնույթ աշխատանքներն ավարտելուց հետո համակարգն անցել է փորձարկման փուլ, որի ընթացքում ևս հայտնաբերվել են առաջ եկած խնդիրներ ու թերություններ:

Փորձարկման փուլն իրականացվել է սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ երեք զուգահեռ դասընթացների միջոցով, որոնց մասնակցել են ուսումնամեթոդական վարչության ու ֆիզմաթ ֆակուլտետի դեկանատի աշխատակիցները և ՎՊՀ քոլեջի դասախոսները: Երկու դասընթացում աշխատակիցները հանդես են եկել որպես դասախոս-դասընթաց ստեղծող, իսկ մյուսում՝ որպես ուսանող:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Դասընթացների ընթացքում դասախոս-դասընթաց ստեղծողներին ներկայացվել են հեռավար ուսուցման հարթակում աշխատելու համար նախատեսված գործիքակազմը, դրանց նշանակությունները, կիրառման ոլորտներն ու յուրահատկությունները և աշխատանքի սկզբունքները: Այս դասընթացի յուրաքանչյուր դասախոս-դասընթաց ստեղծողի համար բացվել է անձնական հաշիվ, որը նրանց հնարավորություն է տվել ստեղծել սեփական դասընթացը:

Ուսանողների խումբն անցել է մեր բաժնի կողմից ստեղծված մեկ ամբողջական հեռավար դասընթաց, որի ընթացքում վերջիններիս ծանոթացվել է համակարգի գործիքակազմի հետ աշխատանքի սկզբունքներին:

2018 թ. ընթացքում ԷԿՏԿՍ բաժնի կողմից ստեղծվել են դասախոսի և ուսանողի մեթոդական ուղեցույցներ, որոնք դասընթացի ընթացքում ներկայացվել են մասնակիցներին, քննարկվել նրանց հետ, լրամշակվել և արդեն գտնվում են պատրաստ վիճակում: Ուղեցույցներում նկարագրված են Moodle կրթական հարթակում դասախոսների կողմից դասընթացների ստեղծման համար կիրառվող գործիքների օգտագործման համար անհրաժեշտ պահանջներն ու կիրառման ոլորտները, իսկ ուսանողների համար՝ կիրառման ասպեկտները:

2018 թ. դեկտեմբերին ԷԿՏԿՍ բաժնի կողմից Facebook սոցցանցում բացվել է տեղեկատվական էջ, որտեղ տեղադրվում են համալսարանում հեռավար ուսուցմանը վերաբերող նորությունները, և որն անընդհատ թարմացվում է:

Ս.թ. ԷԿՏԿՍ բաժնի կողմից ստեղծվել է «Հեռավար ուսուցման իրականացման» կարգ, որը ներկայացվել է համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ս. Թումանյանին:

Ս.թ. բաժինը ձեռնամուխ է եղել Moodle հեռավար ուսուցման հարթակի վերապատրաստման դասընթացի իրականացմանը, որին մասնակցում են համալսարանի տարբեր ամբիոնների թվով 11 դասախոս, որի կազմակերպման նպատակով ստեղծված են դասընթացի նկարագիր և օրացուցային պլան:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Իրականացվել է ամբիոնների կողմից ներկայացված դասախոսների համակարգչային գրագիտության ստուգում, որի արդյունքում ձևավորվել է երկու խումբ, կազմվել են դասացուցակ և գրանցամատյան: Դասընթացի մասնակիցների համար հարթակում ստեղծվել են անձնական հաշիվներ և դատարկ անհատական դասընթացներ: Դասընթացների բոլոր մասնակիցներին տրամադրվել են մեթոդական ուղեցույցներ էլեկտրոնային տարբերակով: Դասընթացներն սկսվել են ս.թ. մարտ ամսին և կավարտվեն հունիս ամսվա սկզբին: Յուրաքանչյուր սովորող-դասախոսի համար հարթակում որպես ուսանող հանդես են գալիս ԷԿՏ կառավարման և սպասարկման բաժնի բոլոր աշխատակիցները, որը հնարավորություն է տալիս վերահսկել ուսուցման պրոցեսը, գնահատել հարթակում տեղադրված նյութերի որակը և համապատասխանությունը համակարգի պահանջներին:

Լաբորատորիաներ և կաբինետներ, համակարգչային լսարաններ

Ներդրված 38 ՄԿԾ-ների դասընթացները սպասարկում են 16 լաբորատորիաների, 8 կաբինետների, 5 համակարգչային լսարանների կողմից: Դրանք մի մասը համահամալսարանական, մյուսները ներֆակուլտետային են:

Կաբինետների հաճախման ստուգումը ցույց տվեց, որ բավականին լավ վիճակ է հատկապես հայոց լեզվի և գրականության, հասարակագիտության (պատմության) կաբինետներում: Ուսանողների հետ զրույցը փաստեց, որ կաբինետում ավելի արագ են սպասարկում. պայմաններից դժգոհություններ չկային: Նույնը արձանագրվել է նաև ՈԱԿ-ի կողմից կատարված «Առկա համակարգում սովորողների կրթական կարիքների» հետազոտության արդյունքներում. ուսումնական կաբինետների վիճակը 4 միավոր է գնահատվել հարցվողների 40.8% (5 միավորանոց սանդղակ), ուսումնական լաբորատորիաների վիճակը գնահատվել է 31.5, համակարգչային լսարաններինը՝ 34.6%-ի կողմից, 5 միավոր են գնահատել 8.5%-ից մինչև 29.2%-ը:

Կաբինետների, համակարգչային լսարանների ապահովվածությունը ընդհանուր առմամբ բավարարում է դասավանդման կարիքները. ուսանողության

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

տրամադրության տակ է 200-ից ավելի (Տե՛ս հավելված 4) համակարգիչ: Ցածր է դրանցից դասից դուրս օգտվելու ցանկությունը: Միշտ չէ, որ ուսանողը ճիշտ է գնահատում կամ օգտվում տրված հնարավորությունից:

Նշված հետազոտության մեջ հարցվողների միայն 6.9% է ինտերնետ ցանցից օգտվելու մատչելիությունը գնահատել 5, իսկ 20.8%-ը՝ 4 միավոր: Եվ սա այն դեպքում, երբ համալսարանը տրամադրում է 30 մեգաբիթ/վայրկյան հզորությամբ ցանց:

2018 թ. վերազինվել է թիվ 3 համակարգչային լաբորատորիան. սրա արդյունքում ձևավորվել է ֆիզմաթ ֆակուլտետում ևս մեկ համակարգչային լսարան:

Դրական տեղաշարժեր կան նաև կենսաբանության ֆակուլտետի դասընթացները սպասարկող ենթակառույցներում:

2015 թվականից կենսաբանաքիմիական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնի դասախոսները համագործակցում են Վանաձորի և Գերմանիայի Լյուդվիգգիստեն քաղաքների աշխատանքային խմբերի հետ «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում՝ ադտոտված տարածքների հետազոտությունների բնագավառում: Առաջին համատեղ սեմինար-քննարկումը տեղի ունեցավ 2016 թ. հունիսին կենսաբանության ամբիոնի նորաբաց կենսաբանա-էկոլոգիական հետազոտությունների լաբորատորիայում: Լյուդվիգգիստեն և Վանաձոր քաղաքների աշխատանքային խմբերի առաջարկով կենսաբանության ամբիոնի դասախոսները կատարել էին Վանաձորի քիմիական կոմբինատի տարածքի հողերի և կոմբինատի «Թույլներ» կոչվող արդյունաբերական թափոնների աղբավայրի ջրի և հողի քիմիական կազմի ուսումնասիրություններ: Փորձանմուշների քիմիական անալիզը կատարվել էր ՀՀ Բնապահպանության նախարարությանը կից, Վանաձորի սանիտարահիգիենիկ կայանի և ՎՊՀ բնագիտական համալիր լաբորատորիաներում, ինչպես նաև կենսաբանաքիմիական ֆակուլտետի նորաստեղծ կենսաբանության լաբորատորիայում: Փորձերի և կատարված հետազոտական աշխատանքի արդյունքները ներկայացվեցին սեմինար-

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

քննարկման ընթացքում: Լաբորատորիայի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2018թ. գարնանը: Լաբորատորիայում հնարավոր է կատարել ոչ միայն ուսումնական փորձեր, այլև բակալավրի և մագիստրատուրայի ավարտական աշխատանքների հետ կապված էկոլոգիական-կենսաբանական բնույթի հետազոտություններ:

Քիմիայի ամբիոնին կից գործող լաբորատորիաներում կուտակվել էին ժամկետանց քիմիական նյութեր, որոնք թեպետ պահեստավորված էին, բայց վտանգ էին ներկայացնում:

Պայմանագիր է կնքվել և ՀՀ-ում գործող կարգի սահմաններում ակտավորվել և ոչնչացվել է 94 կգ նյութ: Քայլը կատարվել է լաբորատոր աշխատանքների արդյունքների բարելավման նպատակով և պահանջվող փորձերի լրիվ ապահովվածության պայմաններում:

Ամբիոնների կողմից նախորդ ուստարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին իջեցված պատվերը հիմնականում աշխատում ենք կատարել մինչև նոր ուսումնական տարին:


Ընդհանուր և լսարանային տարածք

Պատկերն այսպիսին է.

	2014/15	2015/16	2016/17	2017/18
Ուսումնական տարածքը (մ ²)	7453.8	7453.8	7453.8	7453.8
Ուսանողների թիվը	2829	2795	2492	2253
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը	2.6	2.7	3	3.3

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



Կրթական գործընթացին տրամադրված ընդհանուր տարածքը անփոփոխ է այն կազմում է 10860.9 քառ. մ, լսարանայինը՝ 7453.8: Պետք է նկատել, որ չեն ընդգրկվել քոլեջի և վարժարանի կողմից օգտագործվող տարածքները:

Ուսանողների թվի նվազումը թեպետ բերել է բարելավման ցուցանիշ, սակայն խմբերի թիվը հնարավորություն չի տալիս աշխատել մեկ հերթով:

Գրադարան և գրաֆոնդ

2018թ. համար պլանավորված աշխատանքները կատարվել են համապատասխան ժամկետներում:

Հաշվետու տարում ավարտվել է գրադարանի գրաֆոնդերի վերագույքագրման և գրացուցակների թվայնացման աշխատանքները: Նշենք, որ դա բավականին հավակնոտ ծրագիր էր, քանի որ, Հայաստանում ընդունված պրակտիկայի համաձայն, 100.000 միավորից ավել գրաֆոնդ ունեցող գրադարաններում, որպես կանոն, նման աշխատանքներ չեն տարվում: Գրադարանի զարգացման ռազմավարական ծրագրի մեջ այդ խնդիրը ներառելիս գրադարանի աշխատակազմը հստակ չէր կարող պատկերացնել, թե ինչքան ժամանակ և աշխատանք կպահանջվի իրենից այն լուծելու

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

համար: Սակայն այդ աշխատանքը ավարտին է հասցվել բարեխղճությամբ, և այսօր ՎՊՀ գրադարանը ՀՀ այն բացառիկ գրադարաններից մեկն է, որտեղ գրաֆոնդի թիվը հայտնի է միավորի ճշգրտությամբ:


Հաշվետու տարում ավարտվել են գրադարանի հայալեզու և ռուսալեզու գրաֆոնդերի վերստուգման աշխատանքները: Օտարալեզու գրաֆոնդը հիմնովին կոմպլեկտավորվել, վերամշակվել և քարտագրվել է, իսկ ցուցակները՝ թվայնացվել:

2018 թ. դեկտեմբերի 21-ի դրությամբ գրադարանի գրաֆոնդը կազմում է **134.741** միավոր:

18.11.2013 թ. (նախքան վերագույքագրման աշխատանքներն սկսելը) գրադարանը հայտարարագրել էր 228.538 միավոր գիրք: Հետևաբար, գրաֆոնդի անկումը կազմում է 93.797 միավոր:

Գրադարանի ֆոնդերում առկա **134.741** գրքերն ըստ լեզուների բաշխվում են հետևյալ կերպ. հայալեզուն՝ 56.199, օտարալեզուն՝ 76.024 միավոր, որից 71.282-ը՝ ռուսալեզու: Գրաֆոնդի 2518 միավորը հնատիպ և հազվագյուտ գրքերն են:

Նկար 1. Հայալեզու, ռուսալեզու և օտարալեզու գրաֆոնդերի տոկոսային հարաբերությունը.




ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Համալրման խնդիրը մասնակիորեն լուծվել է առանձին հեղինակներից և անհատ քաղաքացիներից ստացված նվիրատվությունների միջոցով: Այս ճանապարհով հաշվետու տարում ստացվել է 1508 միավոր գիրք:

Նկար 2. Նվիրատված և գնված գրքերի հարաբերակցությունն ըստ տարիների.



Բուհի ուսումնագիտական գործընթացին անհրաժեշտ գրականության պակասը գրադարանը փորձում է մասամբ բավարարել եզակի և շատ պահանջված գրքերի պատճենահանման ճանապարհով: Այդ նպատակով 2018թ. գրադարանը ստացել է պատճենահանման նոր սարք: Հաշվետու տարվա ընթացքում վերոնշյալ եղանակով կազմվել է 151 ամբողջական գիրք, մասնակի վերանորոգվել 153-ը:

Գրաֆոնդի՝ պարբերաբար նոր գրականությամբ համալրումը, սպասարկման որակի բարելավումը իրենց հերթին պայմանավորում են ընթերցողների հաճախելիության աճը:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Գրադարանի տարեկան արձեռնածների (ընթերցողների) թիվը, հաճախումը, տացքը

<i>Ցուցանիշներ</i>	<i>Ուսումնական տարի</i>		
	<i>2015/16</i>	<i>2016/17</i>	<i>2017/18</i>
Նոր արձեռնածների (ընթերցողների) թիվը	381	508	293
Ընդհանուր արձեռնածների (ընթերցողների) թիվը	2164	2359	1757
Հաճախումների թիվը	10186	8213	12080
Տացքը	14614	9716	10788

Գրադարանային ռեսուրսների համալրման և ծառայությունների արդիականացման ուղղությամբ կարևոր ձեռքբերումներից է 2015 թ.-ից գործող էլեկտրոնային գրադարանը: Ներկայումս նրա 53 բաժիններում ներբեռնված են տարալեզու 7682 գրքեր: Դրանց հիմնական մասը 2010 թ. հետո ՀՀ-ում և արտերկրում հրատարակված գրքեր են, որոնք շուկայում չկան կամ դժվարամատչելի են:

2017 թ. սեպտեմբերից գործարկվել է էլեկտրոնային քարտադարանի և հեռահար պատվերի ծրագիրը, որը ևս ՀՀ գրադարանային համակարգում քիչ տարածված երևույթ է և եզակի նրանով, որ ոչ թե գնվել է, այլ ստեղծվել է բուհի միջոցներով և ՎՊՀ գրադարանի պահանջներին համապատասխան հնարավորություններով: Պատրաստվել է էլեկտրոնային քարտադարանից օգտվելու ուղեցույց-բուկլետ: Ծրագրին ծանոթացնելու նպատակով 2018 թ. ընթացքում կազմակերպվել են հանդիպումներ համալսարանի ֆակուլտետների ուսանողների խմբերի, ամբիոնների գործավարների, մասնագիտական կաբինետների վարիչների, բուհի վարչական ստորաբաժանումների աշխատակիցների և դասախոսների հետ:


2018 թ. նկատելի աշխատանքներ են իրականացվել նաև գրադարանի ներքին հարդարանքի բարելավման ուղղությամբ՝ դարձնելով այն անհամեմատ ավելի գրավիչ:

	2014/15	2015/16	2016/17	2017/18
--	---------	---------	---------	---------

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Գրքերի թիվը	220993	196649	133275	134106
ՎՊՀ ուսանողների թիվը	2829	2795	2492	2253
Մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը գրադարանում	78	70	53	60




Զնայած որ յուրաքանչյուր տարի որոշակի գումար է հատկացվում գրքերի ձեռքբերմանը, դեռևս այս ուղղությամբ կատարվող աշխատանքների դրվածքի բարելավման խնդիր կա: Խնդիրը որոշ չափով լուծվում է էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի հարստացմամբ, ուսանողների մոտ էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու կարիքի մեծացմամբ և հմտությունների, կարողությունների բարելավմամբ:

	2014/15	2015/16	2016/17	2017/18
Նոր գրքերի տարեկան թիվը	1444	3112	2318	2704
Նոր ամսագրերի տարեկան թիվը	8	7	7	12
Գրականության ձեռք բերման տարեկան ծախսերը (հզ. դրամ)	652800	3000000	3000000	1074570
ՎՊՀ ուսանողների թիվը	2829	2795	2492	2253
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	231	1073	1204	477

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն



2017 թ. գրքերի ձեռքբերման համար հատկացված գումարի զգալի նվազեցում չի եղել. մասնագիտական ամբիոնների պասիվությունը և գնումների կարգն է գործընթացը խոչընդոտել:

Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսը պետք է հասցնել առնվազն 2016-17 ուստարվա ծախսի մակարդակին:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում որակի ապահովման գործընթացները իրականացվել են շահագրգիռ կողմերի անմիջական մասնակցությամբ և համակարգվել են որակի ապահովման կենտրոնի կողմից:

Որակի ապահովման համակարգի գործունեության հիմքում դրված են որակի ապահովման չափանիշները և չափորոշիչները: Իրականացված աշխատանքները տարվել են մի քանի ուղղությամբ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Ռազմավարական ծրագրի իրականացման ցուցիչների հիման վրա մշակվել է ռազմավարական պլանի իրականացման հաշվետվողականության սխեմա, ինչը հնարավորություն է տալիս աշխատանքները համապարփակ ձևով ամփոփել՝ ըստ կատարողականի արդյունքների: Որակի ապահովման կենտրոնի աշխատանքների համակարգման, բարելավման ծրագրի կատարողականի գնահատման մեխանիզմների կատարելագործման նպատակով փորձարկվել է CALS համակարգը:

Առաքելության և նպատակների վերանայման համար իրականացվել է SWOT վերլուծություն՝ ռազմավարական ծրագրի բոլոր ուղղություններով:

Որակի ապահովման գործընթացներին ուսանողների ներգրավվածությունը մեծացնելու և ակտիվացնելու նպատակով կազմակերպված հանդիպումների և քննարկումների ընթացքում բարձրացված մի շարք հարցերի հիման վրա ուսանողների համար կազմվել է ձեռնարկ:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվության հավաքագրման գործող մոդելի ուսումնասիրության արդյունքում ներկայացված առաջարկությունների հիման վրա կատարելագործվել են որակի կառավարման հետադարձ կապի մեխանիզմները: Փորձարկվում է ստորաբաժանումների հաշվետվողականության սխեմա, որը հնարավորություն է

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

տալիս յուրաքանչյուր աշխատանքի արդյունքները անմիջապես տեղադրել ներքին ցանցում և հասանելի դարձնել բոլոր ստորաբաժանումներն:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՄԿԾ-ների արդիականացման և ժամանակակից մարտահրավերներին համահունչ դարձնելու նպատակով ՈԱԿ-ի կողմից իրականացվել են աշխատանքներ՝ տարբեր ուղղություններով, և ներկայացվել է ՄԿԾ-ների որակի ապահովման մեխանիզմները վերանայելու առաջարկ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են «Սոցիալական մանկավարժություն» բակալավրի ԿԾ-ի աուդիտ, ընթացքի մեջ է «Կենսաբանություն» բակալավրի ԿԾ-ի աուդիտը:

Ցկյանս և լրացուցիչ կրթությունը համալսարանում դիտվում են որպես միմյանց փոխլրացնող գործընթացներ: Այս ուղղությամբ իրականացված աշխատանքները ցույց են տալիս, որ լրացուցիչ կրթության ոլորտում նկատվում է որոշակի անկում, ինչպես ՊԴ կազմի այնպես էլ ունկնդիր ուսանողների շրջանում:

Դասախոսների վերապատրաստում									
	Ժամանակաշրջան	Անգլերեն		Ինֆորմատիկա			Իրավական գիտելիքներ	Մանկավարժանոգեբանական գիտելիքներ	ԸՆԴ.
		1-ին	2-րդ	1-ին	2-րդ	3-րդ			
		մակարդակ							
1.	2012-2013 (2-րդ կիս.)	14	11	5	14	7			51
2.	2013-2014 (1-ին կիս.)	26	29	7	7	11	20		100
3.	2013-2014 (2-րդ կիս.)	10	12	6	15	13	38		94
4.	2014-2015 (1-ին կիս.)	13	13	15	5		33		79
5.	2014-2015 (2-րդ կիս.)	1		8			26	23	58
6.	2015-2016 (1-ին կիս.)	9		13			9	26	57
7.	2015-2016 (2-րդ կիս.)			8			5	24	38

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

8.	2016-2017 (1-ին կիս.)	15					5	7	27
9.	2016-2017 (2-րդ կիս.)	1	4	2	3	11	10	7	38
10.	2017-2018 (1-ին կիս.)	4	2					9	15
11.	2017-2018(2-րդ կիս.)							8	8
2016-2017 թթ. (65դասախոս) և 2017-2018 թթ. (23դասախոս) համեմատությամբ նվազել է 64.5%-ով									

Լրացուցիչ կրթ. ունկնդիրները՝ ըստ շրջափուլի		ԸՆԴԱՄԵՆԸ
1.	2017-2018	63
2.	2018-2019	40
Նվազել է		36 %-ով

Աշխատանքներ են իրականացվել կրեդիտային համակարգի կատարելագործման և շարժունության ակտիվացման ուղղությամբ, տարբեր շահակիցների հետ կատարվել են քննարկումներ կրեդիտային համակարգի առավելությունների և բացթողումների վերաբերյալ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Կրթական ծառայությունների գնահատման, կարիքների վերհանման և մշտադիտարկման նպատակով ՈԱԿ-ի կողմից կիրառվում են համապատասխան գործիքակազմ, վերլուծության քանակական և որակական մեթոդներ: Արդյունքում պարբերաբար կատարելագործվում են կրթական ծառայությունների գնահատման և կարիքների վերհանման որակի ապահովման մեխանիզմները, իսկ ստացված արդյունքները մուտքագրվում են տեղեկատվական բազայում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվության իրականացման առանձնահատկությունները, ներկայացվել են առաջարկներ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Ուսումնասիրվել են կարիերայի և շրջանավարտների աջակցության աշխատանքների որակի ապահովման գործընթացները, այդ թվում շրջանավարտների տվյալների բազայի կիրառման մեխանիզմները, շրջանավարտների հետ հետադարձ կապը, ուսանողների և շրջանավարտների ներգրավվածությունը կարիերայի աջակցության գործընթացներում, ուսանողների իրազեկվածությունը և մասնակցությունը Կարիերայի աջակցության աշխատանքներին: Այս ուղղությամբ աշխատանքները համակարգման կարիք ունեն

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՈԱԿ կողմից ուսումնասիրվել է կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականությունը և ընթացակարգերը, ներկայացվել են առաջարկներ:

Առկա են վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի ներգրավման մեխանիզմներ, մասնավորապես, ՊԴ կազմի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր: Ներկայացվել են առաջարկություններ ՄԿԾ-ների համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության երաշխիքների ստեղծման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի մշակման/վերանայման և ներդրման վերաբերյալ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ և ԶԱՐԳԱՑՈՒՄ

Իրականացվել է ՎՊՀ-ում հետազոտական գործունեության ռազմավարության ներդրման և իրականացման գործընթացների դիտարկում: Ուսումնասիրվել է երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի, հետազոտական գործունեության միջազգայնացման գործընթացի մշակված մեխանիզմների առկայությունը: Հարկ է նշել, որ գիտահետազոտական աշխատանքների կատարելագործմանն ուղղված քայլերը, խրախուսման մեխանիզմների ներդրումը, հետազոտությունների տպագրման աջակցության կարգը, միջազգային գիտաժողովները և այլն բերել են նկատելի փոփոխությունների այս ոլորտում:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Ռազմավարական զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքները իրականացված են 70%-ով:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Այս ուղղությամբ իրականացված աշխատանքները նպաստել են ՄԿԾ-ների իրականացման համար նախատեսված կրթական միջավայրի ձևավորմանը: Օրինակ, ստեղծվել է էլեկտրոնային գրադարան, գործում է ուսանողական ճաշարան, առկա են հանգստի գոտիներ: Ըստ ոլորտի վերաբերյալ իրականացված հարցումների արդյունքների քննարկումների, վերլուծությունների՝ լսարանները հնարավորինս կարող են համապատասխանեցվել կրթական ծրագրերի առանձնահատկություններին, ժամանակակից ինտերակտիվ դասավանդման պայմաններին:

✓ Ներդնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ ըստ ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների և պլանի:

✓ Համալսարանի ֆինանսական բյուջեի բաշխման մեջ կատարել շտկումներ՝ հստակեցնելով կրթական միջավայրի բարելավմանն ուղղված միջոցները:

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվել են ՎՊՀ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասարակությանը դրանց հասանելիության ապահովումը, հաշվետվողականության կարգի իրականացումն ու հետադարձ կապը: Հայաստանի մյուս բուհերի համակարգչային կայքի հետ բենչմարկինգը ցույց է տվել, որ ՎՊՀ-ի կայքում տեղադրված տեղեկատվությունը բավականին լայն է և մատչելի: Մասնավորապես, կայքում տեղադրված են բոլոր կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, գիտխորհրդի որոշումները, կառուցվածքը և այլն: ՎՊՀ պաշտոնական կայքում ոչ բոլոր աշխատանքներն են ներկայացված եռալեզու, ինչը բացատրվում է սուղ ֆինանսավորման միջոցներով:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՎՊՀ-ում իրականացվում է արտաքին կապերի իրացումը խրախուսող քաղաքականություն, ինչը կարող է նպաստել կրթության որակի ապահովման փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մշակված և հաստատման են ներկայացված որակի ապահովման հայեցակարգը, վերանայված է ՈԱ քաղաքականությունը: Կազմված է որակի ապահովման համակարգի վերաբերյալ ձեռնարկ՝ շահագրգիռ կողմերի համար:

Որակի ապահովման ներքին համակարգի թափանցիկությունը երաշխավորող հիմքերը արտահայտվում են ՈԱ վերանայված քաղաքականությամբ և ընթացակարգերով: Ներդրման փուլում են ՈԱ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ):

Իրականացվում են աշխատանքներ, որոնք նախապատրաստում են որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների հիմքերը:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունը պարտավոր է լինել գիտելիքահեն: Կրթական հաստատությունն է այն կարևոր օղակը և պատասխանատուն, որ պիտի նպաստի խնդիրների լուծմանը:

Հետազոտական գործունեությունը պետք է ուղղորդվի ոչ միայն գիտության զարգացմանը, այլ նաև ձեռքբերումների ներդրմանը կրթական գործընթացում:

Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներ

Գիտահետազոտական գործունեությունը ռազմավարական է և առաջնահերթ: Այն նպատակաուղղված է ինչպես գիտության զարգացմանը, այնպես էլ ձեռքբերումների, արդյունքների ներդրմամբ, հետազոտության և կրթության համադրմամբ ուսուցման որակի բարձրացմանը:

Համալսարանում գիտահետազոտական հիմնական միավորը ամբիոնն է:

2018թ. ուսումնասիրվել են ՎՊՀ ամբիոնների կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները, և որոշվել է դրանց արդյունավետության ցուցանիշը:


Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բուհի 195 աշխատակիցների կողմից հրատարակվել է 178 գիտական աշխատանք: Արդյունավետության բարձր գործակցով առաջին տեղում է պատմության ամբիոնը (1,63 գործակից, 11 աշխատակից և 20 հոդված), երկրորդ տեղում՝ հայոց լեզվի ամբիոնը (1,46 գործակից, 13 աշխատակից և 22 հոդված), երրորդ՝ կենսաբանության ամբիոնը (1,05 գործակից, 19 աշխատակից և 26 հոդված), չորրորդ՝ ֆիզիկայի ամբիոնը (0,62 գործակից, 8 աշխատակից և 9 հոդված), հինգերորդ՝ օտար լեզուների ամբիոնը (0,56 գործակից, 16 աշխատակից և 15 հոդված), վեցերորդ՝ քիմիայի ամբիոնը (0,27 գործակից, 11 աշխատակից և 7 հոդված), յոթերորդ՝ մանկավարժության ամբիոնը (0,23

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

գործակից, 13 աշխատակից և 9 հոդված), ութերորդ՝ ԻՏՄՄ (0,2 գործակից, 10 աշխատակից և 5 հոդված): Մյուս ամբիոնների արդյունավետության գործակիցը 0 է:

ՎՊՀ ամբիոնների՝ 2017-2018 ուստարվա գիտահետազոտության արդյունավետության վերլուծություն



Բուհի գիտահետազոտական արդյունավետության գործակիցը 0,43 է, որը 2017 թ. 0,04 գործակիցի համեմատությամբ բավական աճել է:

Գիտաժողովներ

2018 թ. նոյեմբերի 2 - 3-ը կայացավ գիտաժողով՝ նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթրյանի ծննդյան 80-ամյակին: Գիտաժողովին մասնակցելու հայտ էր ներկայացրել 38 մասնակից, որոնցից 6-ը՝ Արցախից, 28-ը՝ Հայաստանի Հանրապետությունից, 1-ը՝ Բուլղարիայից, 1-ը՝ Գերմանիայից, 2-ը՝ ԱՄՆ-ից: Մասնակցությունն իրականացվում էր առկա և հեռակա ձևաչափերով: Մասնակցում էին մասնագետներ տարբեր համալսարաններից՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանից, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Երևանի պետական համալսարանից, Շիրակի պետական համալսարանից, Հայ-ռուսական

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

/Սլավոնական/ համալսարանից, ՀՀ ԳԱԱ գրականության և պատմության ինստիտուտներից, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտից՝ Մատենադարանից, Նյու-Յորքի Ազգային ուսումնական խորհրդից, Սոֆիայի Կլիմենտ Օհրիդսկու անվան համալսարանից, Բեռլինի ազատ համալսարանից:

Գիտաժողովի աշխատանքներն ընթացել են 3 բաժանմունքներում՝ «Հին և միջնադարյան գրականության պատմություն», «Նոր գրականության պատմություն», «Նորագույն գրականություն և գրական քննադատություն»:

2018 թ. հոկտեմբերի 11-12-ը ՎՊՀ-ում տեղի ունեցավ «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համաշարում» խորագրով 5-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին, որի նպատակներն էին՝

1. գրականագիտության, լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցության, թարգմանագիտության, լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկաների ոլորտում գիտական հետազոտությունների և գործնական աշխատանքների արդիական ու հեռանկարային ուղղությունների որոշարկումը,

2. գիտական փորձի փոխանակումը, գիտական և գործնական իմացությունների միահյուսման ուղիների որոնումը:

Գիտաժողովն անցկացվում էր Կրասնոդարի Մարքեթինգի և սոցիալ-ինֆորմացիոն տեխնոլոգիաների ակադեմիայի հետ համատեղ:

Գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել 37 մասնակից Հայաստանից, Ռուսաստանից (Կրասնոդար, Մագադան), Լեհաստանից, Ուկրաինայից, Բելոռուսից, Սերբիայից: Գիտաժողովին մասնակցեցին 35-ը, որոնցից՝ 16-ն արտերկրից: Հոդվածներից ոչ մեկը չի մերժվել: Արտերկրից մասնակցությունը հիմնականում հեռակա էր (պատճառները՝ ընտանեկան, առողջական, Հայաստանի ներքաղաքական): Ներկա էր Ուկրաինայի ներկայացուցիչ Սվետլանա Վառավան:

Գիտաժողովի աշխատանքներն ընթացել են հետևյալ բաժանմունքներում՝ «Լեզվաբանություն», «Լեզվի և գրականության դասավանդման մեթոդիկա», «Գրականագիտություն»:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Գիտաժողովի մասնակիցները ներկայացնում էին հետևյալ բուհերը՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Շիրակի պետական համալսարան, Շուկայագիտության և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիա, Խարկովի Վ.Ն. Կարազինայի անվան ազգային համալսարանի միջազգային կրթության ինստիտուտ, Մարիուպոլի պետական համալսարան, Կրասնոդարի մշակույթի ինստիտուտ, Մինսկի պետական լեզվաբանական համալսարան, Պոզնանի Ա. Միցկևիչի անվան համալսարան, Հյուսիս-արևելյան պետական համալսարան, Բելգրադի համալսարան, Բրեստի Ա. Ս. Պուշկինի անվան պետական համալսարան:

ՎՊՀ գիտական տեղեկագիր

2018թ. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական տեղեկագրի Ա պրակի (հումանիտար և հասարակագիտական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար ստացվել է 57 հոդված (2015թ.՝ 45, 2016՝ 47, 2017՝ 70): Գրախոսումներից հետո 13 աշխատանք չի երաշխավորվել տպագրության, 2 հոդված հեղինակները որոշել են չտպագրել: Երկու աշխատանք մերժվել է, քանի որ հայտնաբերվել են գրագողության փաստեր: Տպագրության է երաշխավորվել 40 հոդված:

Գիտական տեղեկագրի Բ պրակի (բնական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար ստացվել է 44 հոդված (2015թ.՝ 25, 2016՝ 28, 2017՝ 35): Ստացված հոդվածներից 2-ը մերժվել են պահանջվող չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով, 1-ը հետ է վերցվել հեղինակի կողմից: Գրախոսումներից հետո 5 աշխատանք չի երաշխավորվել տպագրության: Գրանցվել է գրագողության մեկ դեպք: Տպագրության է երաշխավորվել 36 աշխատանք, որոնցից՝ 17 գիտական, 16 մեթոդական և 3 հաղորդում:

Գիտական կադրերի պատրաստում և ձեռքբերումներ

ՎՊՀ-ին տրամադրվող ասպիրանտուրայի տեղերի սակավության պատճառով գիտական կադրերի պատրաստումը հիմնականում իրականացվում է հայցորդության

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

միջոցով: ՎՊՀ-ում հայցորդության հիմունքներով գիտական կադրերի պատրաստումը կանոնակարգվում է ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքով, «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով:

2015-16, 16-17 ուստարիներում որպես հայցորդ ձևակերպված ուսանողները 2017-18 ուստարում շարունակել են իրենց ուսուցումը ըստ հաստատված ուսումնական պլանի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում համապատասխան ամբիոններում անցկացվել է նրանց ատեստավորումը, որի արդյունքներով նրանք տեղափոխվել են հաջորդ կուրս: Տարբեր գիտական ամսագրերում տպագրվել են նրանց գիտական հոդվածները: 2015-16 ուստարվա հայցորդներից երեքը՝ Ս.Բարսեղյանը, Ս.Մուրադյանը և Թ.Տավարաձյանը 2018թ մայիս-հունիս ամիսներին հանձնել են մասնագիտական որակավորման քննությունները, իսկ Գ.Էմինյանը հանձնել է այն 2018թ նոյեմբերին:

2016-17 ուստարվանից հայցորդ ձևակերպված 7 հայցորդներից, որոնք անցել էին 2-րդ ուստարվա ատեստավորումը, ներկայումս ուսումը շարունակում են 4-ը (երեքը գտնվում են ակադեմիական արձակուրդում՝ երեխա ունենալու կապակցությամբ):

2017-18 ուստարվա հայցորդության համար ներկայացվել էր մեկ դիմում, որը քննարկվել էր գրականության ամբիոնում, հաստատվել էր գիտական ատենախոսության թեման, նշանակվել էր գիտական ղեկավար, սակայն հայցորդը անձնական պատճառներով հրաժարվեց հայցորդությունից:

2018-19 ուստարվանից հայցորդության հիմունքներով ասպիրանտուրա է ընդունվել 2 դիմորդ, երկուսն էլ որպես հայցորդ ձևակերպվել են պատմության ամբիոնում:

Հայցորդության դիմումների նվազման հիմնական պատճառներից մեկը կարելի է համարել քննարկման փուլում գտնվող «ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության մասին» նոր օրենքով նախատեսված հայցորդության ինստիտուտի վերացումը: Համաձայն նախնական տարբերակի՝ գիտական կադրերի պատրաստման միակ ուղին ասպիրանտուրան (դոկտորանտուրան) է:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Վերջին տասը տարիների ընթացքում մեր համալսարանին ՀՀ կառավարության կողմից հատկացվել է ասպիրանտուրայի միայն մեկ անվճար տեղ (հեռակա ուսուցմամբ) 2016թ-ին Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությունից, որը սակայն մնաց թափուր՝ դիմորդի՝ զինվորական ծառայության մեջ գտնվելու պատճառով:

ՎՊՀ-ում ասպիրանտական կրթության զարգացմանը, բացի տնտեսական պատճառներից, մեծապես խոչընդոտում է ասպիրանտուրայի ընդունելության պարտադիր նախապայմանի՝ օտար լեզվի իմացության (TOEFLE ծրագրով) հավաստագրերի առկայության անհրաժեշտությունը: Համապատասխան դասընթացներին մասնակցելու և քննություն հանձնելու համար ցանկացողները ստիպված են շաբաթական մի քանի անգամ հասնել մայրաքաղաք, ինչն անհնարին է աշխատող կամ ուսանող ապագա դիմորդների համար:

2018 թ. ասպիրանտուրայի ենթադրյալ դիմորդների համար նախարարության կողմից տրամադրվել էր երկու անվճար տեղ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում TOEFLE, իսկ ԵՊՀ-ում՝ ինֆորմատիկայի դասընթացներին մասնակցելու և քննություն հանձնելու նպատակով: Կնքվեց համապատասխան պայմանագիր, բայց դասընթացներին մասնակցեց միայն մեկը, որը հաջողությամբ հանձնեց քննությունները:

2018 թ. պաշտպանվել է թեկնածուական 2 թեզ (Ժ.02.07. - «Գերմանական լեզուներ», ԺԳ.00.01. - «Մանկավարժության տեսություն և պատմություն»):

2018 թվականին համալսարանի գիտխորհրդի կողմից պրոֆեսորի գիտական կոչում է շնորհվել 1 աշխատակցի և դոցենտի՝ 4 աշխատակցի (2017թ.՝ 3), հետևյալ մասնագիտությունների գծով՝

պրոֆեսորի

Գ.00.05.«Բուսաբանություն»

Ռոգենտի

Ժ.02.01. «Հայոց լեզու»

ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» / ուսաց լեզու/

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ԺԳ00.03—«Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ:

ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (ֆիզիկական դաստիարակություն»

ԺԹ.00.01 – «Հոգեբանության տեսությունն պատմություն»

Համալսարանի գիտական խորհուրդը քննարկել և դրական կարծիքով ԲՈԿ է առաքել ևս 1 աշխատակցի՝ դոցենտի գիտական կոչում հայցադիմումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանի գիտական խորհուրդը քննարկել և տպագրության է երաշխավորել 5 ուսումնամեթոդական աշխատանք (2017թ.՝ 6, 2016թ.՝ 6, 2015 թ.՝ 9, 2014 թ.՝ 15) և 3 գիտական մենագրություն:

ՈՒԳԸ

Ուսանողական գիտական ընկերությունը շարունակում է կատարել ուսանողներին համախմբելու, գիտական ակտիվությունը և հոգևոր զարգացումն ապահովելու իր գործառույթները: Ուսանողական գիտական ընկերությունն աջակցում է ուսանողներին՝ ապահովելով ոչ միայն գիտական, այլև հասարակական ակտիվություն: Ամբիոններին կից խմբակները և հանձնաժողովները նպաստում են ուսանողների՝ հետազոտական, գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ու կարողությունների զարգացմանը, կազմակերպվում են գիտական սեմինարներ: Ամենամյա ներբուհական և հանրապետական գիտաժողովները իրենց դրական ազդեցությունն են ունենում ուսանողների վրա:

Տարեցտարի ավելանում է ուսանողների հետաքրքրվածությունը ՈՒԳԸ-ի գործունեության նկատմամբ, բարձրանում է հետազոտական աշխատանքներում ու գիտաժողովներին ներգրավվածության աստիճանը: Շատ ուսանողների գիտական հոդվածները հետագայում զարգանում են, թեմատիկան ընդլայնվում է: ՈՒԳԸ աշխատանքները դառնում են նաև կուրսային կամ դիպլոմային աշխատանքներ:

Յուրաքանչյուր ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերությունը զբաղվում է ֆակուլտետի ուսանողների ակադեմիական գրագիտության մակարդակի բարձրացմամբ՝ շեշտը դնելով ոչ միայն առկա, այլև հեռակա համակարգում սովորող ուսանողների առաջընթացի վրա:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

2018 թվականին տպագրված հոդվածները թվով գերազանցում են նախորդ տարիների արդյունքները: 2018 թվականին տպագրվել է 71 հոդված, որոնցից 7-ը տպագրված են Արցախի պետական համալսարանի «Գիտական ընթերցումներ»-ում, 1-ը՝ Էլեկտրոնային գիտական ամսագրում, 47-ը՝ ՎՊՀ 7-րդ գիտաժողովի նյութերում, 15-ը՝ ՎՊՀ գիտական տեղեկագրում՝ համահեղինակությամբ, 1-ը Վոլգոգրադում (Международный студенческий научно-практический форум по финансовой грамотности «Время-деньги»):

ՎՊՀ Ուսանողական գիտական ընկերությունը համագործակցում է Հայաստանի բուհերի մեծ մասի հետ: ՎՊՀ ուսանողները, մասնակցելով հանրապետական և միջազգային գիտաժողովների, հանդես են գալիս բարձր մակարդակով, արժանանում գովեստի խոսքերի և մրցանակների:

2018 թ. նոյեմբերի 6-ին ՎՊՀ ՈԻԳԸ կազմակերպել է նստաշրջան, որին մասնակցել են հանրապետության 8 բուհերի ուսանողներ:

2018թ. կազմակերպված գիտաժողովների ժամանակ ներկայացրած հոդվածները դեռևս գրախոսման փուլում են: 2018թ. ՎՊՀ 6 ուսանողների աշխատանքներ տպագրվել են Արցախի պետական համալսարանի «Գիտական ընթերցումներ» հոդվածների ժողովածուում: Նշենք, որ ժողովածուն ներառել է նույն թվականի հանրապետական գիտաժողովի զեկուցումները, իսկ գիտաժողովին ՎՊՀ-ն ունեցել է 19 մասնակից (13 մասնակիցներ չեն ուղարկել իրանց աշխատանքները):

2018թ. «ՎՊՀ Ուսանողական գիտաժողովի նյութեր» ժողովածուի տպագրման համար ստացվել է 87 հոդված:

25 հոդված չի համապատասխանել ընդունված չափորոշիչներին: Հոդվածների հեղինակներին տրվել է թերությունները շտկելու հնարավորություն, որից հետո դարձյալ հոդվածները չեն համապատասխանել ընդունված չափորոշիչներին և չեն ներկայացվել գրախոսման: Գրանցվել է գրագողության 3 դեպք: Գրախոսման է ներկայացվել ընդհանուր առմամբ 59 հոդված: Ֆիզիկայի ամբիոնը երաշխավորել է 3 հոդված, մաթեմատիկայի ամբիոնը՝ 12, ինֆորմատիկայի ամբիոնը՝ 3, արվեստի ամբիոնը՝ 4, հայոց լեզվի ամբիոնը՝ 9, գրականության ամբիոնը՝ 4, քիմիայի ամբիոնը՝ 3,


ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն


մանկավարժության ամբիոնը՝ 7, հեգեբանության ամբիոնը՝ 3, պատմության ամբիոնը՝ 7, քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնը՝ 2, տնտեսագիտության ամբիոնը՝ 2:

Վերջնական արդյունքում տպագրման է հանձնվել է 59 աշխատանք:

2018 թ. ստանալով ուսանողական գիտական նստաշրջանների 6 հրավեր՝ մեր ուսանողները մասնակցել են բոլորին




ՎՊՀ ուսանողների մասնակցությունը հանրապետական ուսանողական գիտաժողովներին



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՎՊՀ Ուսանողների մասնակցությունը ուսանողական գիտաժողովներին՝ ըստ ամբիոնների՝



ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊԵՐ

2018թ. Համագործակցության և կապերի բաժնի գերակա ուղղությունները եղել են.

- ✓ ՎՊՀ-ի համագործակցության ընդլայնումը ներքին և արտաքին օղակների հետ (այդ թվում նաև հայաստանյան և օտարերկրյա բուհերի հետ),
- ✓ Գործընկերային բուհերի հետ տարվող աշխատանքների ակտիվացումը,
- ✓ Արտասահմանյան բուհերի հետ համագործակցությունը և նոր գործընկերների որոնումը,
- ✓ Տեղեկատվական աշխատանքի իրականացում՝ ՎՊՀ-ի աշխատակիցներին և կրթական ոլորտի հաստատություններին դրամաշնորհային ծրագրերի, կոնֆերանսների, սեմինարների մասին իրազեկման նպատակով,
- ✓ Համագործակցության և կապերի բաժնի գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի համալրումը:
Բաժնի գործունեությունը եղել է առաջընթացային.
- ✓ գրանցվել են դրական արդյունքներ, կատարվել են ձեռքբերումներ,
- ✓ թերի կատարված աշխատանքների և չիրականացված նպատակների, խնդիրների վերլուծում,
- ✓ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների վերհանում,
- ✓ գտնվել են չլուծված խնդիրների կարգավորման և իրականացման հնարավոր լուծումները:

Բաժնի և բուհի այլ ստորաբաժանումների միջև կապն ամրապնդելու, բուհի միջազգայնացման գործընթացը խթանելու և տեղեկատվությունն առավել արդյունավետ տարածելու նպատակով նշանակվել են 16 ամբիոնների միջազգային պատասխանատուներ, որոնց հետ կազմապերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում նրանց ներկայացվել են իրենց պարտականությունները, տրվել է տեղեկատվություն Էրազմուս+ Հայկական բուհերի միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանման Բուսթ նախագծի վերաբերյալ՝ շեշտադրելով բուհի միջազգայնացմանը միտված գործունեության ծավալման

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

անհրաժշտությունը: Փետրվար ամսին կազմակերպվել է հանդիպում, որի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են միջազգայնացման ռազմավարության մշակման հիմնական դրույթները և իրականացվել է բուհի միջազգայնացման գործընթացի խթանմանը նպաստող քննարկում world cafe մեթոդով, որի ժամանակ վերհանվել են դասախոսներին հետաքրքրող խնդիրներ և կատարվել հետաքրքիր առաջարկություններ: Ապրիլ և մայիս ամիսներին կազմակերպվել են հանդիպումներ նույն խմբի անդամների և ստորաբաժանումների պատասխանատուների հետ, որոնց հետ իրականացվել է SWOT վերլուծություն: Տարբեր ձևաչափերով եղել են քննարկումներ, վերհանվել են բուհի ուժեղ և թույլ կողմերը, քննարկվել են հնարավորություններն ու սպառնալիքները, որոնք հիմք են ՎՊՀ-ի միջազգայնացման ռազմավարական պլանի բարելավման համար: Մշակված փաստաթուղթը ներկայացված է Էրազմուս+ Բուսթ նախագծի գործընկերներին, որոնց կողմից այն պետք է անցնի փորձագիտական քննություն:

Բուսթ նախագծի շրջանակներում Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարանում 2018 թ. հունիսի 12-ին կայացել է ազգային կոնֆերանս՝ նվիրված բարձրագույն կրթության միջազգայնացման ազգային ռազմավարության մշակմանը և հայաստանյան բուհերի միջազգայնացման ռազմավարական պլանավորմանը: Կոնֆերանսին հրավիրված էին ներկայացուցիչներ տարածաշրջանի բուհերից՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղից և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղից, ինչպես նաև միջին մասնագիտական հաստատություններից (Վանաձորի պետական բժշկական քոլեջ, ՎՊՀ քոլեջ, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ), որոնց հետ քննարկվել են ուսումնական հաստատությունների միջազգայնացման հետ կապված խնդիրները և նրանց առջև դրված նոր մարտահրավերները: Այս կոնֆերանսը մարզի բուհերի միջազգայնացման ուղղությամբ տարվող դեռևս միակ միջոցառումն է, ինչը բարձր է գնահատվել Բրյուսելի մշտադիտակմանը փորձագետի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացության մեջ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Բաժնի գործունեության և բազում այլ միջոցառումների մասին տեղեկատվություն տարածելու նպատակով փետրվար ամսից ստեղծվել է ֆեյսբուքյան էջ, որտեղ անընդհատ տեղադրվում են բաժնի կողմից կազմակերպված միջոցառումների հայտարարությունները, աշխատանքների արդյունքները, շարժունությանը մասնակցած ուսանողների տպավորությունները և բուհում տեղի ունեցած այլ միջոցառումների մասին տեղեկատվությունը:

2018 թ. հունվար ամսից փետրվարի սկիզբ ընկած ժամանակահատվածում բաժինը բուհի այլ ստորաբաժանումների և արտասահմանյան ու հայաստանյան բուհերի հետ ունեցած համագործակցության շնորհիվ ակտիվ մասնակցություն է ցուցաբերել Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհային նախագծերի դիմում-հայտերի լրացման գործընթացում: Արդյունքում հաջողվել է դիմել թվով 18 նախագծերի, որոնք թեև չեն արժանացել դրամաշնորհի, սակայն բաժնի աշխատակիցները ինչպես նաև ամբիոնների այլ աշխատակիցներ ձեռք են բերել դրամաշնորհներին դիմելու փորձ: Արտասահմանյան շատ բուհեր այդ կարճ համագործակցության շնորհիվ արտահայտել են իրենց պատրաստակամությունը ՎՊՀ-ի հետ համատեղ կրկին դիմելու Էրազմուս+ կարողությունների զարգացման դրամաշնորհներին:

Գործընկեր որոշ համալսարանների հետ բաժինն իրականացրել է արդյունավետ համագործակցություն հատկապես Վոլգոգրադի պետական համալսարանի և ՎՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում փետրվարի 2-ին պատմության ամբիոնի ներկայացուցիչների հետ համատեղ բաժինը մասնակցել է Ստալինգրադի ճակատամարտին նվիրված առցանց գիտաժողովին, որտեղ ներկայացվել են նույն ճակատամարտին մասնակցած հայերի, նրանց սխրանքների, ինչպես նաև ՎՊՀ-ի միջազգային գործունեության մասին տվյալներ: Այդ գիտաժողովում ցուցաբերած ակտիվ մասնակցության և համագործակցության հետագա խթանման նպատակով գործընկեր բուհը գործուղել է Վոլգոգրադի պետական համալսարանի կենսաբանության ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դմիտրի Աստախովին՝ կարդալու

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

դասախոսություն ՎՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի աշխատակիցների և ուսանողների համար: Այժմ բուհերի կենսաբանական ֆակուլտետների միջև տարվում են բանակցություններ համատեղ աստիճանաշնորհման ծրագրի մշակման ուղղությամբ:

Հոկտեմբերի 17-ից 21-ը ՎՊՀ-ի «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» և «Կառավարում» բաժնի ուսանողները մասնակցել են Վոլգոգրադի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Ժամանակը փող է» խորագրով ֆինանսական գրագիտության միջազգային գիտագործնական ֆորումին, որտեղ ՎՊՀ-ի թիմը զբաղեցրել է 3-րդ տեղը, իսկ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գևորգ Հախվերդյանն արժանացել է առաջին մրցանակին:

Մագդադանի Հյուսիսարևելյան պետական համալսարանի, Կազանի պետական բժշկական համալսարանի դասախոսները ներգրավվել են «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցման համատեքստում» խորագիրը կրող V միջազգային գիտաժողովի խմբագրակազմում: Մարքեթինգի և սոցիալ-ինֆորմացիոն տեխնոլոգիաների ակադեմիայի ռեկտոր Ռ. Աղաբեկյանը և միջազգային պատասխանատու պրոֆ. Ռ.Սահակյանը ներգրավվել են գիտաժողովի կազմկոմիտեում:

Ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստելու և հետագա ֆինանսավորում ստանալու նպատակով բաժինը լրացրել է դիմում-հայտեր Եվրամիության բազում համալսարանների հետ, որի արդյունքում հաջողվել է ֆինանսավորում ստանալ և շարժունություն իրականացնել հետևյալ համալսարանների հետ.


1. Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարան (Բուլղարիա),
2. Գրանադայի համալսարան (Իսպանիա),
3. Ալեքսանդրո Իռան Կուզայի անվան համալսարան (Ռումինիա),
4. Պորտուի համալսարան (Պորտուգալիա),
5. Լինշյոպինգի համալսարան (Շվեդիա),
6. Ֆրիդրիխ Ալեքսանդրի Նյուրնբերգ-Էրլանգեն (Գերմանիա),

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

7. Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարան (Լեհաստան):

Ներքոբերյալ նկարում ներկայացված են ուսանողների և դասախոսների շարժունության 2013-14 ուստարվանից մինչև 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքները: Վերջին տարիների տվյալներով նկատվում է ուսանողների թվի նվազում և աշխատակիցների թվի ավելացում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Էրազմուս Մունդուս ծրագրի նախագծերի ժամանակ առավելությունը տրվում էր ուսանողներին, իսկ Էրազմուս+ երկկողմանի պայմանագրերով ԵՄ բուհերը առավելությունը տալիս են ներգնա և արտագնա դասավանդող և վարչական աշխատակազմի անդամների շարժունության խթանմանը:



2018 թ. մեծ առաջընթաց է նկատվել բուհի դասավանդող աշխատակազմի շարժունության ուղղությամբ. ՎՊՀ-ից դասավանդելու նպատակով ԵՄ բուհեր են մեկնել օտար լեզուների ամբիոնի վարիչ Լուսիկ Վարդանյանը, նույն ամբիոնի դոցենտ Լիլիթ Սարուխանյանը և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ Քրիստինե Ղազարյանը: 2018 թ. երկրորդ կիսամյակում դասավանդման նպատակով ևս չորս դասախոսական

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

անձնակազմի անդամներ հնարավորություն կունենան դասավանդելու ԵՄ գործընկեր բուհերում, ինչը բավականին լուրջ առաջընթաց է ՎՊՀ-ի միջազգայնացմանը նպաստող գործունեության համար:

Այս տարի ՎՊՀ-ում հյուրընկալվել են 3 դասավանդող և 4 վարչական աշխատակազմի անդամներ, որոնց շնորհիվ առավել սերտանում են ԵՄ բուհերի հետ համագործակցության հնարավորությունները և քննարկվում հետագա համատեղ հետազոտություններ կատարելու հնարավորությունները, նախագծվում են հնարավոր համագործակցության ուղղությունները:

Բաժինը աջակցություն է ցուցաբերել շարժունությամբ ուսումնառող ուսանողների վիզայի և ուսումնառության համաձայնագրերի պատրաստման գործում:

Շարժունությամբ ժամանող և մեկնող դասախոսներին նույնպես տրամադրվել է աջակցություն բուհում անցկացվելիք միջոցառումների կազմակերպման, ժամանակացույցի պատրաստման և տեղեկատվության տրամադրման հարցերով:

Արտասահմանյան փորձը տարածելու նպատակով բաժինը կազմակերպել է հանդիպումներ ԵՄ բուհերում շարժունությամբ ուսումնառություն ստացած ուսանողների հետ, որի ընթացքում նրանք բուհի այլ ուսանողների ներկայացրել են արտերկրում ունեցած իրենց փորձառության, դասավանդման մակարդակի, ծագած դժվարությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն՝ փորձելով նոր դիմող ուսանողներին ծանոթացնել արտերկրում իրականացվող ուսումնառության մեթոդներին:

Շարժունության նոր երկկողմանի պայմանագրեր են կնքվել Լեհաստանի Կվիձին քաղաքի Պովիսլանական, Բուլղարիայի Ալգել Կանչևի և Էստոնիայի Տալլինի տեխնոլոգիական համալսարանների միջև: Էստոնիայի Տարտուի, Նորվեգիայի հարավարևելյան, Լեհաստանի Սլուպսկի և Գդանսկի համալսարանների հետ տարվում են բանակցություններ և ակնկալվում է դրական պատասխան:

Գիտահետազոտական և շարժունության խթանման նպատակով կնքվել են համագործակցության պայմանագրեր ՌԴ-ի Կրասնոդարի մարկետինգի ակադեմիայի, Մակաուի գիտությունների և տեխնոլոգիայի, Լեհաստանի Սլուպսկի պոմերանական

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

և Գրանսկի համալսարանների հետ, ինչը ենթադրում է գիտահետազոտական և համատեղ ուսուցման համագործակցություն երկու բուհերի միջև:

Կան դժվարություններ և խոչընդոտներ.

- բուհի սահմանափակ ֆինանսական միջոցներ,
- անգլերեն լեզվով դասավանդվող առարկաների սակավ քանակ,
- դեռևս չհաստատված ազգային միջազգայնացման ռազմավարություն,
- տարվող բազմաբնույթ աշխատանքների և այլ միջոցառումների համար տարածքային պայմանների բարելավում:

Թափանցիկություն և գովազդ

ՎՊՀ լրատվության և տպագրության բաժինը հաշվետու ժամանակաշրջանում գործել է ըստ իր պարտավորությունների և իրականացրել իր գործառույթները՝ համալսարանի պաշտոնական համացանցային կայքի վարում և պարբերական թարմացում, ներբուհական իրադարձությունների ամենօրյա լուսաբանում և իրագրելում կայքի և պաշտոնաթերթի միջոցով, ձևավորման և տպագրության աշխատանքներ, «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի համարների պատրաստում և հրատարակում, գիտական նյութերի ժողովածուների ձևավորում և հրատարակության պատրաստում, գովազդային, պատճենման աշխատանքներ, տեսա-ֆոտոարխիվավորում, համալսարանի գովազդին միտված աշխատանքներ ՁԼՄ-ներում, ինչպես նաև սոցիալական հարթակներում, մասնավորապես՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում:

Հաշվետու ժամանակաշրջանում լույս է տեսել «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի 5 համար, հրատարակվել են գիտական տեղեկագրի Ա և Բ պրակները, տպագրության է պատրաստվել գիտաժողովների 3 ժողովածու (ուսանողական գիտական ընկերության, 5-րդ միջազգային, Մ. Սանթոյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովների նյութերի): Գովազդի համար ձևավորվել և տպագրվել են 6 լայնաֆորմատ պաստառներ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Նախապատրաստվել է «Մագիստրոս» հոդվածների ժողովածուն:

Մեծացել է համալսարանում տեղի ունեցած միջոցառումների մասին պատմող նյութերի հանդեպ հանրային հետաքրքրվածության աստիճանը: Նորությունները ՎՊՀ-ի պաշտոնական կայքում առավելագույնն ապահովել են 2000-ից ավելի դիտում: Հայտարարություններն ունեցել են 1500-ից ավելի ընթերցում: Հաշվետու ժամանակահատվածում կայքը մշտապես թարմացվել է՝ ազատվելով հնացած տեղեկատվական նյութերից, այդ աշխատանքները կրել են պարբերական բնույթ: Կայքի նյութերը, առավելապես նորությունները, տեղադրվել են նաև ռուսերեն ու անգլերեն լեզուներով: Ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարում թեմատիկ նյութերում մեծ տեղ են զբաղեցրել բուհի տարբեր ստորաբաժանումների մասին պատմող լուրերը, ռեպորտաժները, հոդվածները, ակնարկները:

Կայքէջում, բացի նորությունների մասին պատմող նյութերից (225), տեղադրվել են նաև երկշաբաթաթերթի բոլոր համարները (5), 310 հայտարարություն, տեղեկատվական նյութերին կից լուսանկարների հավաքածուներում՝ բազմաթիվ լուսանկարներ բուհի միջոցառումներին, ստորաբաժանումներին վերաբերող և այլն:

Հայաստանյան 35 բուհերի վիրտուալ ներկայացուցչությունների համեմատական վարկանիշային ցուցակում («Arcaler QI», «Webometrics») ՎՊՀ պաշտոնական կայքը 2018 թ. նախորդ տարվա 4-րդ հորիզոնականից նահանջել է 6-րդ հորիզոնական. նահանջը պայմանավորված է հաշվետու տարում կայքի աշխատանքների հետ կապված որոշակի խնդիրներով (մասնավորապես՝ կայքի ծրագրային հիմնարար փոփոխություններով՝ 2018-ի 1-ին կիսամյակի ընթացքում, ինչպես նաև տևական ժամանակահատված լրատվության պատասխանատուի պաշտոնի թափուր մնալու հանգամանքով):

Համալսարանն ունի ֆեյսբուքյան 2 նույնանուն էջ՝ «Վանաձորի պետական համալսարան». առաջինը գրանցված է որպես անհատ օգտատեր, երկրորդը՝ կազմակերպություն: Առաջին էջի ընկերների թիվը թույլատրված առավելագույնն է՝ 5000, այն անընդհատ թարմացվում է պակաս ակտիվ ընկերներին նորերով փոխարինելու հաշվին: Երկրորդ էջն ունի 4759 ակտիվ հետևորդ: Ֆեյսբուքյան էջերի

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

միջոցով տարածվում են vsu.am պաշտոնական կայքում գետեղված բոլոր նորություններն ու հայտարարությունները՝ հնարավորություն տալով նաև մեկնաբանել դրանք: Հաշվետու ժամանակաշրջանում Ֆեյսբուքյան էջերով ապահովվել է նաև նամակագրություն շուրջ 1500 օգտատիրոջ հետ. պատասխաններ են տրվել հետաքրքրող հարցերի: Ֆեյսբուքում տեղադրված ՎՊՀ կայքի նորություններից առավելագույն դիտումների թիվը 12.310 է, իսկ ընդունելության քննությունների հայտարարության դիտումների թիվն անցել է 20.000-ից: Ֆեյսբուքը համացանցային զանազան ծրագրերի միջոցով հնարավորություն է տալիս արձանագրել տարածվող հայտարարությունների ոչ միայն դիտումների թիվը, այլև ստանալ խիստ կարևոր տեղեկություններ այցելուների բնակության վայրի (Հայաստանում և նրա սահմաններից դուրս), սեռի, տարիքի վերաբերյալ: Դա բացառիկ հնարավորություն է՝ մոտավոր արձանագրելու համապատասխան տարիքի անձանց՝ բուհում կրթություն ստանալու հավանականության աստիճանը:

Ստորև ներկայացվում է 2018 թվականին ՎՊՀ պաշտոնական կայքի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունն աղյուսակի տեսքով (2016 և 2017 թթ. համեմատությամբ):

Աղյուսակ 1: Տեղեկատվություն 2018 թվականին ՎՊՀ պաշտոնական կայքի աշխատանքների վերաբերյալ

<i>Ցուցանիշ</i>	<i>2016 թ.</i>	<i>2017 թ.</i>	<i>2018 թ.</i>
Նորությունների ընթերցում և կայքի այցելություններ	184 000	192 000	154.000
Ֆեյսբուքյան ընկերների թիվ (I)	5000	5000	5000
(II)	-	2455	4759
Կայքէջից վերատեղադրում	355	330	290
Անցողարձի լուսաբանում	205	345	220

2018 թվականի ընթացքում բուհական անցողարձն առավել շատ լուսաբանել է «Լոռի Թի-Վի» հեռուստաընկերությունը՝ 57, Լոռու «ՄԻԳ»-ը՝ 8, «Ֆորտունա»-ն՝ 30, Ալավերդու «Անկյուն + 3»՝ 2 նյութ: Համալսարանի մասին առավել շատ նյութեր տպագրվել են «Լոռու մարզ» թերթում՝ 15, «Վանաձորյան խճանկար»-ում՝ 7:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

2018 թվականի ընթացքում բուհում կազմակերպված մշակութային կամ գիտական միջոցառումներին արձագանքել են նաև հանրապետական՝ «Հ1» (2), առավել հաճախ և պարբերաբար՝ «Երկիր Մեղիա» (7) հեռուստաալիքները:

Թափանցիկությունն ապահովվում է նաև ԳԱՑ-ի միջոցով: Վերջինիս տվյալները վերջին չորս տարիների կտրվածքով տեղադրվում են համալսարանի պաշտոնական կայքում:

Վեց բաժիններն իրենց ենթաբաժիններով ամբողջությամբ արտացոլում են համալսարանի աշխատանքային գործունեության բոլոր բնագավառները՝ ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և նորամուծություն, արտաքին կապեր և համագործակցություն:

Կայքով տեղեկատվություն է տրվում նաև գիտական խորհրդում քննարկվող հարցերի մասին:

Գովազդին են ուղղված նաև ՄԿԾ-ների տեղեկագրքերի տեղադրումը կայքում: Դրանք սովորաբար թարմացվում են ԿԾ-ի մեջ կամ նորմատիվային փաստաթղթերում փոփոխություն կատարելու դեպքում. կայքում առկա է 28 տեղեկագիրք:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ՍՈՑԻԱԼ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՎՊՀ Մշակույթի կենտրոնը հավատարիմ է մնացել իր հիմնական նպատակներին՝ աջակցում համալսարանում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին, միջոցառումների համակարգում, ուսանողության գեղագիտական ճաշակի և մշակութային միջոցառումների որակի բարձրացում, ՎՊՀ ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացման խթանում, տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում, համերգների և ներկայացումների կազմակերպում և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել են մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումներ և քննարկումներ, որոնք նպատակաուղղվել են ուսանողների գեղագիտական ճաշակի բարելավմանը:

2018թ. կատարված աշխատանքներն ըստ սահմանված նպատակների և խնդիրների

Հաշվետու ժամանակահատվածում գործում են մշակույթի կենտրոնին կից ժողովրդական և ժամանակակից պարի խումբը, թատերական, ասմունքի, վոկալ-գործիքային և երգի խմբակները, որոնք ղեկավարվում են ուսանողների կողմից՝ հասարակական հիմունքներով:

Մշակույթի կենտրոնի խմբակներում ընդգրկված են մոտ 70 շնորհալի ուսանողներ համալսարանի տարբեր ֆակուլտետներից:

Կազմակերպվել են հայրենասիրական բնույթի բազում միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության օրվան, Հայոց բանակի կազմավորման տարեդարձին, հայոց պատմության լուսավոր էջերին՝ մայիսյան հերոսամարտերին և այլն:

Ամենամյա և ավանդական միջոցառումների շարքում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները՝

- «Գիտելիքի օր»,

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

- «Ոսանողների միջազգային օր»,
- «Մայրության և գեղեցկության օր»,
- «Հայաստանի Հանրապետության անկախության օր»,
- «Մազիստրատուրայի շրջանավարտների ավարտական երեկո» և այլն:

Այլ ազգերի նկատմամբ հանդուրժողականություն սերմանելու նպատակով կազմակերպվել է ռուսական « Մալենիցա» միջոցառումը:

Կազմակերպվել են մի շարք ֆակուլտետային միջոցառումներ՝

- «Ֆակուլտետի օր»,
- «1-ին կուրսեցիներին նվիրված միջոցառում»,
- «Սոցիալական մանկավարժի օր»,
- «Բարեկենդան»:

Մշակույթի կենտրոնի 2017 թ. փետրվարին բացված ֆեյսբուքյան էջը է՛լ ավելի շատ հետևորդներ է հավաքել: Այն հնարավորություն է տալիս կապ հաստատել այլ համալսարանների այն ուսանողների հետ, որոնք հետաքրքրված են մշակութային կյանքով: Յուրաքանչյուր միջոցառումից հետո էջում տեղադրվում են հոլովակներ, որոնք ներառում են միջոցառումներից դրվագներ: Էջի շնորհիվ հաստատել ենք կապ նաև այլ հաստատությունների հետ, օրինակ՝ Լոռու մարզային գրադարանում պարբերաբար կայանում են տարբեր թեմատիկ միջոցառումներ, որոնց ժամանակ իրենց մասնակցությունն են բերում նաև մշակույթի կենտրոնի սաները:

Մշակույթի կենտրոնը աջակցել է նաև սեպտեմբերի 7-ին Վանաձորում կայացած Աղուհացի տոնակատարությանը: Համալսարանի պարի խումբը Հայքի հրապարակում հանդես է եկել գեղեցիկ պարային կատարումներով:

Հոկտեմբերի 10-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ֆրանսահայ նշանավոր երգիչ, երգահան, գրող, կինոդերասան և հասարակական գործիչ Շառլ Ազնավուրի հիշատակին:

Գրականության ամբիոնի հետ համատեղ մշակույթի կենտրոնի գրական խմբակը կազմակերպել է հայրենասիրության թեմայով ասմունքի մրցույթ: Հաղթող է

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

ճանաչվել բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն մասնագիտության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալվարդ Թումասյանը:

Մարզական ձեռքբերումներ

Համալսարանում ուշադրության կենտրոնում է նաև ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որոնք հաճախ ընդգրկվում են ավանդական միջոցառումների ծրագրերում (Սահմանադրության օր, Մայիսյան հաղթանակներ, Անկախության օր և այլն): Միջֆակուլտետային միջոցառումները դառնում են ոգևորիչ, ուժեղացնում են մրցակցային ոգին: Ավանդական է նաև հրաձգության ամենամյա մրցույթը, որին թիմերը մասնակցում են նաև կանանց ընդգրկմամբ:

Բոլոր տարիներին ունեցել ենք ճանաչված մարզիկներ: Այս ժամանակահատվածում ևս.

1. Արսեն Ղազարյան - ֆ/դ 4-րդ կուրս, առկա: Սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության 3-րդ տեղ, Եվրոպայի մեծահասակների առաջնության 3-րդ տեղ, ՀՀ մեծահասակների առաջնության 1-ի տեղ,
2. Հովհաննես Մաղաքյան – ֆ/դ 3-րդ կուրս, առկա: «Ազատ ըմբշամարտ», Եվրոպայի երիտասարդների առաջնության 1-ի տեղ, ՀՀ երիտասարդների առաջնության 1-ի տեղ, Ա. Հարոյանին նվիրված հուշամրցաշարի 1-ի տեղ, Ռ. Գոլեցյանի անվան միջազգային մրցաշարի 1-ի տեղ, միջազգային մրցաշարի (Բելառուս) 1-ի տեղ, միջազգային մրցաշարի (Մոլդովա) 2-րդ տեղ,
3. Արսյոմ Սոլոյան - ֆ/դ 1-ի կուրս, հեռակա: «Ուիժային եռամարտ», Եվրոպայի առաջնության 1-ի տեղ, բացարձակ առաջնության 2-րդ տեղ,
4. Նարեկ Դալլաքյան - ֆ/դ 1-ի կուրս, առկա: «Սամբո ըմբշամարտ», Եվրոպայի երիտասարդների առաջնության 2-րդ տեղ, ՀՀ երիտասարդների առաջնության 1-ի տեղ, աշխարհի առաջնության 5-րդ տեղ,

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

5. Հովհաննես Մխիթարյան - ֆ/դ 1-ի կուրս, հեռակա: «Ազատ ըմբշամարտ», Եվրոպայի մինչև 23տ. առաջնության 3-րդ տեղ, ՀՀ մինչև 23տ. առաջնության 1-ի տեղ, միջազգային մրցաշարի (Խարկով) 2-րդ տեղ:
6. Վախթանգ Հարությունյան - ֆ/դ 1-ի կուրս, առկա: «Բոնցքամարտ», Եվրոպայի երիտասարդների առաջնության 3-րդ տեղ, ՀՀ երիտասարդների առաջնության 1-ի տեղ, Հայաստան-Ռուսաստան հանդիպում, 1-ի տեղ,
7. Էլլադա Ալավերդյան – ֆ/դ 2-րդ կուրս, առկա: «Աթլետիկա», ՀՀ մեծահասակների 1500մ վազքի առաջնության 1-ի տեղ (4.56.38), կրոսավազք 2000մ. 1-ի տեղ (7.26.0), փոխանցումավազք 4x400մ. 1-ի տեղ (4.09.07), Coca-Cola Yerevan maraton-ի մրցումներ վազք 11,5կմ. 3-րդ տեղ (20.52.83), 19-րդ ամառային ուսանողական խաղեր 1-ի տեղ:
8. Նունե Աղաջանյան – օտար լեզու 4-րդ կուրս, առկա: «Լեռնադահուկ», ՀՀ մեծահասակների առաջնություն, հսկա ոլորավայրէջք, 1-ի տեղ, հատուկ ոլորավայրէջք, 1-ի տեղ, լրացրել է սպորտի վարպետի նորման,
9. Մերի Հովհաննիսյան – մ/հոգ. 2-րդ կուրս (առկա): 19-րդ ամառային ուսանողական խաղեր, ս/թենի անհատական 1-ի տեղ, թիմային 3-րդ տեղ, և Բաթումի միջազգային մրցաշարի հաղթող,
10. Մարիանա Բաղյան - ս/աշխ. 3-րդ կուրս, առկա: ՀՀ ուսանողական խաղեր, հնգամարտ 1-ի տեղ, ՀՀ մեծահասակ առաջնություն 2-րդ տեղ:
11. Մհեր Մարկոսյան - ֆ/դ 1-ի կուրս, առկա: «Ազատ ըմբշամարտ», ՀՀ երիտասարդների առաջնության 1-ի տեղ, միջազգային մրցաշարի (Բելառուս) 3-րդ տեղ, Գոլենցյանի անվան միջազգային մրցաշարի 1-ի տեղ, Եվրոպայի առաջնության 5-րդ տեղ, աշխարհի առաջնության մասնակից:
12. Էրիկ Կոստանյան - ֆ/դ 5-րդ կուրս, հեռակա: 19-րդ ամառային ուսանողական խաղերի «սեղանի թենիս» անհատական առաջնության 1-ի տեղ:

2018 թ. լավագույն թիմ է ճանաչվել Ֆուտզալի տղաների հավաքականը (ՀՀ ամառային ուսանողական խաղեր 3-րդ տեղ, ՀՀ ֆուտզալի բարձրագույն խմբի 2017-2018 թթ.առաջնության 4-րդ տեղ):

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

Շենքային պայմանների բարելավում

Կրթական միջավայրի բարելավումը չի ենթադրում միայն բուն ուսումնառություն: Գրավչությունը, հարմարավետությունը, աչքի համար հաճելի տարածքն անպայմանորեն ազդում են ուսանողների և աշխատակիցների տրամադրության վրա՝ խթանելով աշխատանքի արդյունավետությունը:

Հարցման ժամանակ հարցվողները տվել են բավարար պատասխան. խնդիր ունենք միայն սանհանգույցների վիճակի բարելավման առմամբ (5 միավորանոց սանդղակում 23%-ը գնահատել է 1 միավոր, 4՝ 21,5%, 5՝ 6,9%):

Տնտեսական մասի բազմաբնույթ գործունեությունն է ապահովում համալսարանի բնականոն աշխատանքը:

Տնտեսական մասի աշխատակիցները ներգրավված են եղել համալսարանում 2018թ կազմակերպված բոլոր միջոցառումներին, կատարել են ղեկավարության կողմից իրենց տրված բոլոր հանձնարարությունները: Մասնավորապես կատարվել են.

1. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի հարավային և արևելյան ճակատային մասերի պատուհանների փոխարինում ժամանակակից եվրոպատուհաններով:
2. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի հարավային և արևելյան արտաքին պատերի ճակատային սավաղների ներկում:
3. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում:
4. Քիմիայի լաբորատորիայի վերանորոգում, արդիականացում:
5. Համալսարանի մասնաշենքերի տանիքների ջրհորդանների, ջրահեռացման խողովակների միացությունների ստուգման և վերանորոգման աշխատանքներ:
6. Համալսարանի վարժարանի տանիքում ձնարգելիքների տեղադրման, անցակետի ջրահեռացման խողովակների նորով փոխարինման և տեղադրման, տանիքի թիթեղների պտուտակներով ամրացման աշխատանքներ:

ՎԱՆԱԶՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018 թ. գործունեության հաշվետվություն

7. Համալսարանի՝ Վանաձորի Գր. Լուսավորիչի 47 հասցեի մասնաշենքի էլեկտրական սնուցումը թիվ 6 դպրոցին պատկանող վահանից առանձնացվել է, և դարձել ենք առանձին բաժանորդ:
8. Բազում գյուղում գործող ՎՊՀ-ի ճամբարի աշխատանքների կազմակերպում:
9. ՎՊՀ-ի գլխավոր մասնաշենքի միջանցքների և առանձին կաբինետների՝ ընդհանուր թվով 610մ² մանրահատակի լաքապատում և 678մ² մակերեսով հատակների հղկում, անցքերի մշակում, լաքապատում:
10. Համալսարանի թիվ 1 մասնաշենքի 4-րդ հարկի միջանցքում լրացուցիչ ջեռուցման մարտկոցների մոնտաժում:
11. Համալսարանի Տիգրան Մեծի 36 հասցեի ներքին բակի դիտահորերի մաքրում:
12. Ձմռան նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կատարվել են կաթսայատան որոշ սարքավորումների մասնակի վերանորոգում և ընդհանուր տեխնիկական զննում:
13. «Բազում» ուսումնամարզական հանգրվանի մասնաշենքներում մետաղապլաստե դուռ-լուսամուտների կարգաբերում, մասնավորապես դրան ապակե կոտրված փաթեթի փոխարինում նորով, դռների և պատուհանների ծխնիների, փականների նորոգում կամ նորերով փոխարինում:
